

ԱՄՆ-ն կկազմի ԵՄ-ի կողմից ներմուծվող հեղուկացված բնական գազի երկու երրորդը, իսկ 2028-ին՝ 80%-ը: Իսկ ո՞վ է սկսել հակամարտությունը Մերձավոր Արեւելքում՝ ԱՄՆ-ն, ինչի՞ համար՝ որ դառնա ԵՄ գազի շուկայի 80 տոկոսի տերը: Հիմա հասկանում եք, չէ՞, թե ինչի համար են պատերազմները, եւ ում են դրանք ծառայում:

Կարդացեք՝ էջ 5

Ես քաղաքականությամբ հետաքրքրված չեմ, այդ հարցերն ինձ չեն հուզում: Բայց, որպես քաղաքացի, ինձ հուզում է, թե որտեղ եմ ապրում ու ինչ պայմաններում: Եթե ես չեմ կարող ինչ-որ բան փոխել, նշանակում է՝ ես խառնվելու առիթ չունեմ: Իսկ թե ինչու են իմ ընկերները երբեմն խառնվում քաղաքականությանը, դա իրենց խնդիրն է:

Կարդացեք՝ էջ 6

Արցախցիների վերադարձի իրավունքը ճանաչված է միջազգային իրավունքով: Մեր ժողովուրդն իրավունք ունի հարցնել Փաշինյանին. ո՞վ է քեզ իրավունք տվել՝ ոտնահարելու այդ սրբազան իրավունքը, դու հարցրե՞լ ես արցախցիներին, հայ ժողովրդին: Ինչո՞ւ ես դա նույն հարթության վրա դնում ադրբեջանցիների կեղծ «իրավունքի» հետ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 78 (4213), 16 մայիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Գործարար շրջանակներից տեղեկություններ են հասնում, որ իշխանությունը, բառի ամենաուղիղ իմաստով, տեռոր է սկսել իրենց դեմ: Գործարարներին բաժանել են 3 խմբի՝ օլիգարխիա, միջին ու փոքր, եւ ամեն մեկի մասով համապատասխան աշխատանքներ են տարվում: Նիկոլ Փաշինյանի հանձնարարությամբ՝ բանագնացներ են նշանակվել, որոնք բանակցում են գործարար շրջանակների հետ, որ նրանց օգտագործեն իշխանության օգտին: Բանագնացները տարբեր են. մի տեղ տվյալ տարածքի «խառոշիներն» ու հարց լուծողներն են, մի տեղ՝ մարզպետներն ու համայնքապետերը, մի այլ տեղ՝ ուժայիններ կամ ՔՊ-ամերձ գործարարները: «Աշխատանքներ» ասվածն էլ շանտաժն ու սպառնալիքն են. «կամ մեզ հետ եք, կամ ձեզ ունեզրկելու ենք, լցնենք բանտերը»: Ընդ որում, այդ ամենն ասելուց հետո պարտադիր շեշտում են, որ Նիկոլ Փաշինյանի անունից են եկել զրուցելու: Որոշ գործարարներ հակադարձել են, թե 30 տարի քաղաքական գործընթացներին եւ թեմաներին երբեւէ չեն խառնվել, հիմա էլ չունեն նման ցանկություն, բայց նման որեւէ հիմնավորում իշխանությունը չի ընդունում, չխառնվելը որակում է իբրեւ իր դեմ սաբոտաժ, հետեւաբար՝ փոխանցում են վարչապետի հրահանգը՝ կամ աշխատում եք, կամ «սեւ ցուցակում» եք հայտնվում:

Որոշ տեղեկություններով՝ իշխանությունը վերջերս ռուսախոս ֆեյքեր է բուծել, որոնք ակտիվ մեկնաբանություններ են գրում Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավի լայվերի, տեսանյութերի տակ՝ իրենց աջակցությունը հայտնելով ՔՊ-ին եւ հատկապես՝ Փաշինյանին: Նրանք նաեւ հավաստիացնում են, թե հունիսի 7-ին իբր Ռուսաստանից հատուկ գալու են՝ ՔՊ-ին ընտրելու: Այս «հանճարեղ» գաղափարն իշխանության քարոզիչների գլխում հղացել է մի քանի պատճառով. նախ՝ որ ցույց տան, թե հայ-ռուսական լարված հարաբերություններն ամենեւին չեն արտացոլում ռուսաստանաբնակ հայերի՝ ՀՀ իշխանությունների նկատմամբ վերաբերմունքը, որ նրանք անհանգստացած չեն, շարունակում են «սիրել եւ երկրպագել» Նիկոլ Փաշինյանին, ու Պուտին-Փաշինյան հարաբերությունները ոչ մի խնդիր չեն կարող ստեղծել մեր հայրենակիցների համար: Եվ երկրորդ. տպավորություն գործեն, թե ՌԴ-ում ապրողներին եթե անգամ որոշ ընդդիմադիրներ Հայաստան բերեն, միեւնույն է՝ նրանք գալու են ու ՔՊ-ի օգտին քվեարկեն: Մինչդեռ ընդամենը շաբաթներ առաջ իշխանության ներկայացուցիչները սպառնում էին, թե հենց օդանավակայանում կձերբակալեն Հայաստան եկողներին, որոնք գալիս են ընդդիմության օգտին քվեարկելու:

Վախի մթնոլորտ

Նախորդ՝ 30 տարվա ընտրություններին հետեւած եւ մասնակցած անձինք միաբերան պնդում են, որ ոչ մի ընտրության ժամանակ մեր երկրում այսչափ վախի մթնոլորտ չի եղել, որ շարքային մարդիկ պատժվեն ընդդիմությանը պաշտպանելու համար, վախենան իրենց կարծիքը հայտնել, եթե այն ընդդիմության օգտին է, զգուշանան իրենց նախընտրությունների մասին խոսել եւ ընդդիմադիր թեկնածուներին բացեիբաց պաշտպանել: Նախկին ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը, որը ՀՀԿ-ի իշխանության տարիներին անարգել քարոզչություն էր անում, խոսում իշխանական ճնշումների եւ վախի մթնոլորտի մասին, այնպիսի իրավիճակ է ստեղծել երկրում, որ մարդիկ վախենում են ընդդիմադիր կարծիք արտահայտել, ընդդիմություն լինել, ընդդիմադիրների կողքին կանգնել: Նա ոչ միայն ընդդիմադիր գործիչներին է հալածում, այլեւ՝ շարքային մարդկանց, որոնք դեմ են իշխանություններին, ընդդիմադիր հայացքներ ունեն: Նա հիմնովին մոռացել է, որ ժամանակին՝ մեր հանրության կողմից մերժված ու բռնապետական հռչակված իշխանությունների օրոք, ինքն ագրեսիվ քարոզչություն էր անում. բարձրանում ավտոտնակների վրա ու ելույթներ ունենում, մտնում էր ՀՀԿ-ականներին պատկանող տարածքներ, ասենք, Լֆիկի Բանգլադեշ, ու թաղառթաղ շրջում: Նաեւ այդ քարոզչության շնորհիվ իրենց «եռագլուխ» ուժը՝ «Ելքը», ժամանակին մտավ խորհրդարան: Եվ ոչ մեկն այն ժամանակ չէր ասում՝ «գլուխդ պատին կտաս», բայց վարչապետ չես դառնա, քեզ «բոմժ ենք սարքելու», բանտ ենք գցելու եւ այլն: Հիմա ինքը հոխորտում է, սպառնում է, վարչապետական բոլոր լծակները գործի դրած՝ քարոզարշավ է անում, վախի ու տեռորի մթնոլորտում փորձում է վերարտադրվել... որ ավարտին հասցնի Ալիեւին տված խոստումները՝ Սահմանադրություն փոխի, հօգուտ Ադրբեջանի սահմանազատում անի, Հայաստան պետությունը ոչնչացնի:

Պարզվում է՝ իշխող կուսակցության նախընտրական բուկլետների մեծ մասը քաղաքացիներին տնետուն ընկած բաժանում են ոչ թե կուսակցականները, տրամաբանական կլիներ, որ մեծ երիտասարդական կառույց ունեցող ՔՊ-ն իր երիտասարդ անդամներին լծեր այդ գործին, այլ՝ շարքային քաղաքացիներ, որոնց համար դա վարձատրվող աշխատանք է: 1 շաբաթվա կամ 10 օրվա համար նրանք 200-250 հազար դրամ են ստանում՝ բուկլետ բաժանելու դիմաց: Մեզ ասացին, որ ամենասկզբում ՔՊ-ականներին են հանձնարարել դա, սակայն մի քանի օր անց շատերը հրաժարվել են՝ քաղաքացիներից ստացած թուքումից հետո: Ընտրողներից ոմանք ոչ միայն խոսքով են լուտանքներ թափել բուկլետ բաժանողների գլխին, այլեւ որոշ գործողությունների են դիմել՝ ջուր են շփել երիտակտիվիստների վրա, դուռն են շրխկացրել երեսներին, վռնդել են իրենց բնակարաններից:

«ԽՈՒԼԻԳԱՆԸ» ՃՕԱՄՅԱ ՄԱՔՐՈՒՀԻՆ Է

Քննչական կոմիտեն նախօրեին հաղորդագրություն տարածեց Տաշիր համայնքի պոլիկլինիկայում տեղի ունեցած «խուլիգանական» դեպքի վերաբերյալ, որից տպավորություն կար, թե Սամվել Կարապետյանի «ուժեղ» աջակիցը քիչ է մնացել դանակահարի ՔՊ-ական խեղճուկրակ մի քաղաքացու, որը հանդգնել է Հայաստանի փոքրացրած քարտեզը վերնաշապիկին փակցրած մտնել պոլիկլինիկա: «Տաշիր համայնքի պոլիկլինիկայում Ն. Պ.-ն, նկատելով Ն. Գ.-ի օձիքին փակցված՝ ՔՊ կուսակցության ղեկավարի կողմից նվիրած քարտեզը, վիրավորել է նրան, ապա պահանջել է հեռանալ պոլիկլինիկայից՝ հայտնելով, որ այդ տարածքը Ս. Կ.-ին է պատկանում, որից հետո սպառնացել է դանակով հարվածել, այնուհետեւ քարտեզը քաշել է օձիքից, ինչի հետեւանքով Ն. Գ.-ի ինքնազգացողությունը վատացել է, վայր է ընկել եւ գետնին հարվածելու հետեւանքով գլխի շրջանում ստացել մարմնական վնասվածք»: ՔԿ-ն ձերբակալել է ընդդիմադիր «խուլիգանին»: Մենք պարզեցինք, որ խոսքը պոլիկլինիկայի մաքրուհու մասին է՝ 60-ին մոտ տարեց մի կնոջ, որը չի կարողացել անտարբեր անցնել ՔՊ-ի աջակից տղամարդու սադրանքների կողքից եւ նրա հետ լեզվակռվի մեջ է մտել: Մինչդեռ ՔԿ հաղորդագրությունից կարելի էր կարծել, թե «դանակ են քաշել» իշխանության աջակցի վրա:

Օրերս ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունեց Միջազգային քրեական դատարանի նախագահ Տոմկո Ականեին:

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԻԱԿ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՌԴ-Ի ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄՆ ԷՐ

Ա դեմքի ուրախ արտահայտությամբ ինչ-որ համագործակցության հարցեր էր քննարկում ու լուսանկարվում: Ինչի՞ մասին են նրանք խոսում, եթե երկու տարուց ավելի է անցել 2024 թվականի փետրվարից, երբ Հայաստանը վավերացրեց Հռոմի ստատուտը, բայց որեւէ հայց կամ հաղորդում հանցագործության մասին Միջազգային քրեական դատարան չենք ներկայացրել: Հասկանալի է մի բան՝ շոուն Հռոմի ստատուտի շուրջ շարունակվում է:

Իսկ 2023 թվականի վերջին, երբ Փաշինյանն ու թիմակիցները հող էին նախապատրաստում այս փաստաթղթի վավերացման համար, որպես հիմնական պատճառ ու նպատակ՝ նշում էին Ադրբեջանի դեմ միջազգային հայցեր ներկայացնելու հնարավորությունը, Հայաստանի ու Արցախի ժողովրդի համար անվտանգային երաշխիքների ստեղծումը: «Հռոմի ստատուտի վավերացման որոշումը կայացվեց 2022թ. դեկտեմբերին, երբ ակնհայտ դարձավ, որ ՀԱՊԿ եւ հայ-ռուսական ռազմավարական գործընկերության գործիքները բավարար չեն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգությունն ապահովելու համար: Այդ որոշումը որեւէ կերպ ուղղված չէ ՀԱՊԿ-ի կամ ՌԴ-ի դեմ»,- հայտարարում էր Փաշինյանը՝ 2023 թվականի սեպտեմբերին, եւ Հայաստանի ժողովրդի միամիտ հատվածը սրան հավատում էր:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«Դու մի կողմից գնում ես իրենց հետ խաղաղության պայմանագիր կնքելու, մյուս կողմից ասում ես՝ «ես քեզ դատի եմ տալու»: Դա աբսուրդ է»,- սա էլ ԱԺ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանի մեկնաբանությունն էր «Ազատություն» ռադիոկայանին՝ նույն օրերին տրված:

Հիմա ի՞նչ կասեք՝ 2 տարի անց. ստացվում է՝ Հռոմի ստատուտը զուտ հակառուսական քայլ էր՝ եվրոպացիների հրահանգով Պուտինին նյարդայնացնելու համար: **Արթուր Խաչատրյանը** պատասխանում է. «Մենք ասում էինք, որ սուտ եք ասում, Հռոմի ստատուտի վավերացման թիրախն Ալիեւը չէ, դուք սրանով էս աշխարհաքաղաքական լարված իրավիճակում հերթական հակառուսական քայլն եք կատարում, որը Հայաստանին ոչ մի դրական բան չի բերի, իսկ դա նա է, ինչ եղավ: Ոչ մի ադրբեջանցի հանցագործի պատասխանատվության ենթարկելու գործողության չդիմեցին: Ավելին՝ համաձայնել են Ադրբեջանի հերթական պահանջին՝ հետ քաշել իրար նկատմամբ եղած փոխադարձ հայցերը, չնայած ի՞նչ հայց պետք է ունենար Ադրբեջանը Հայաստանի դեմ, ես չեմ պատկերացնում: Իսկ ինչքա՞ն Հայաստանն Ադրբեջանի դեմ հայցեր ուներ: Հենց թեկուզ արցախցիների ցեղասպանության դրվագով: Ուղղակի հերթական անգամ ժողովրդին խաբեցին, գնացին հակառուսական քայլի՝ դրանով էլ ավելի խորացնելով հայ-ռուսական հարաբերությունների ճգնաժամը, որը վերջիվերջո տեսանք, թե Մոսկվայում ինչքան հրապարակային դրսեւորվեց: Ես մեծ մտավախություն ունեմ, որ ԵԱՏՄ-ն կարող է մայիսի 28-29-ին հստակ վերջնագիր ներկայացնել, իսկ թե ինչ է նշանակում ԵԱՏՄ-ից Հայաստանի դուրս գալը կամ մասնակցության սառեցումը, կարծում եմ՝ շատ լավ հասկանում եք»:

Պատգամավորը չի կարծում, որ մայիսի 28-29-ին ԵԱՏՄ երկրները միակողմանիորեն կդադարեցնեն մեր անդամությունը ԵԱՏՄ-ին: «Հայաստանից ապրանքը Ռուսաստան առանց մաքսի պետք է անցնի, դա ակնհայտ է, բայց չմոռանանք «Ռոսպոտրեբնադզորի», «Ռոսալկոհոլնադզորի», «Ռոսսելխոզնադզորի» մասին, որոնք արտաքին քաղաքական գործիքներ են: Մեր գյուղատնտեսական մթերքների հիմնական շուկան Ռուսաստանն է, եթե ջերմուկից բացի մեր մուրաբաները ու հյութերն արգելեն, ի՞նչ ենք անելու, որտե՞ղ ենք վաճառելու»: Ստացվում է, որ Հռոմի ստատուտի վավերացման միակ էֆեկտը Ռուսաստանի հետ հարաբերությունների էլ ավելի վատթարացումն էր: Բայց որոշ իրավապաշտպաններ պնդում են, որ ՄՔԴ-ին միանալը կարեւոր կռվան էր, Ադրբեջանի հետ հարաբերություններում խաղաքարտ, որը մարտավարական առավելություն է տվել մեզ:

«Շնորհակալ եմ ինձ ծիծաղ պարգեւելու համար»,- պատասխանում է Արթուր Խաչատրյանը: «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցության առաջին կին ներկայացուցիչ, իրավապաշտպան **Նինա Կարապետյանցն** այն գործիչներից է, որն ի սկզբանե կողմ էր արտահայտվում Հռոմի ստատուտի վավերացմանը եւ այսօր էլ կարծիքը չի փոխել: «Նման փաստաթղթերը մեզ համար շատ կարեւոր են, որպեսզի մենք կարողանանք, դրանք օգտագործելով, մեր հայկական շահերը եւ իրավունքները պաշտպանել: Լրիվ այլ հարց է, որ դրանք ընդունվում են շատ դեպքերում որպես ակցիա, ինչ-որ մեկի դեմ, ու սա միակ նման փաստաթուղթը չէ: Նախկինում մենք մի այլ իրավիճակ ունեինք, երբ որ քվեարկում էին մարդիկ տարբեր միջազգային կառույցներում, եւ այդ քվեարկությունները որեւէ դրական արդյունք Հայաստանի համար չունեին, բայց նպաստավոր էին, օրինակ՝ Ռուսաստանի շահերի համար: Հիմա էլ Հռոմի ստատուտն այս իշխանությունների կողմից ընդունվել է ուղղակի ՌԴ-ին ցավացնելու համար: Իշխանությունները դա չօգտագործեցին, դա միայն PR շոու էր՝ ցույց տալու, որ իրենք ահավոր ժողովրդավար են, ահավոր արեւմտամետ են, մինչդեռ այն կարող էին օգտագործել ռազմական գործողություններ իրականացրած տարբեր անձանց պատասխանատվության ենթարկելու համար, ներառյալ ամենաբարձրաստիճան պետական պաշտոնյաների: 9 ամսից ավելի շրջափակման մեջ պահելը արցախցիներին, հետո ցեղասպանական գործողությունները, հարձակումները Հայաստանի տարածքի վրա, խաղաղ բնակչության դեմ ռազմական գործողություններն ու էլի բազմաթիվ գործողություններ, այլ հանցագործություններ կարող էին հայցեր դառնալ»,- նշում է Նինա Կարապետյանցը: Բայց Փաշինյանը փոխադարձաբար հրաժարվեց հայցերից, եւ չեն դիմել ՄՔԴ, որովհետեւ, ըստ կանոնակարգերի, ՄՔԴ հայցից հրաժարվել չի կարելի, ինչպե՞ս նա բարձրաստիճան ադրբեջանցիների դեմ հայց կներկայացներ: «Նիկոլ Փաշինյանը եւ հայկականության շահն իրար հակասող երկու գաղափար են: Փաշինյանի գործողությունները ցեղասպանական գործողություններին հանցակցություն են»,- ասում է Կարապետյանցը:

ՉԻ ԿԱՐԵԼԻ ՀԱՎԱՍԱՐՎԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ ԽՈՍԵԼ ԻՐ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՎ

Բլոգեր Արտակ Ավետիսյանը 1 ամսով կալանավորվեց. նա Փաշինյանին «դավաճան» էր անվանել, կանչել Շենգավիթ՝ խոստանալով նրան «ս...ր» անել: Ինչո՞ւ է իրավապահ համակարգն աչք փակում փաշինյանականների ագրեսիվ հայտարարությունների վրա, փոխարենը՝ մի անմեղ բառի համար անձին տանում կալանքի՝ հարցրինք նախկին դատախազ **Ռաֆֆի Ասլանյանին**:

- ՔՊ-ական Սարիկ Մինասյանը Ֆեյսբուքում մի քաղաքացու բացեիբաց սեռական հայհոյանքներ էր գրել, սպառնացել, սակայն դա որեւէ իրավական հետեւանք չունեցավ, փոխարենը՝ ինչ-որ ընդդիմադիր բլոգեր մեկ սուր խոսքի համար կալանավորվում է:

- Ասեմ ավելին՝ ոչ միայն Սարիկ Մինասյանն է նման խոսքեր ասել, այլեւ նրա աջակիցները շաբաթներ առաջ սպառնում էին Վեհափառի գլուխը ջարդել, Նիկոլ Փաշինյանին մի քանի օր առաջ իր աջակիցներից մեկն ասաց, որ բոլոր ընդդիմադիրներին վերջինս մորթի: Եթե մենք այս ամենը փորձենք համադրել՝ այս հայտարարությունները եւ կալանավորված անձի հայտարարությունը, ապա դրանք ուղղակի անհամադրելի են, համեմատության եզրեր ուղղակի չկան, բայց այս ամենից պետք չէ զարմանալ: Սա բացահայտ քաղաքական հետապնդում է: Նիկոլ Փաշինյանը կորցրել է իրականության զգացումը: Նա մի մարդ է, որը հանուն իշխանության պատրաստ է ամեն ինչի: Ես որքան հասկացա՝ բլոգերի կալանավորումը ոչ միայն վերոնշյալ խոսքերին է վերաբերում, այլեւ՝ նրան, որ նա ասել է. «Փախածներ, արեք ստեղ»: Այս հայտարարությունը դիտարկել են որպես ատելության խոսք: Նա ընդամենը կանչել է իշխանականներին Շենգավիթի մետրոյի մոտ՝ նշելով, որ նրանք վախկոտ են եւ չեն գնա իր հետ հանդիպման, եւ այստեղ չկա ատելության խոսք, հետեւապես՝ չկա հանցակազմ: Բայց մենք չպետք է զարմանանք՝ եթե Միքայել սրբազանին, Սամվել Կարապետյանին ամիսներով կալանավորում են ապօրինաբար, այլեւս անցել են բոլոր հնարավոր սահմանները: Եթե կար ինչ-որ մի փոքր բարոյականության սահման, որը թողել էին, դրանք էլ հատեցին: Հանուն իշխանության շարունակելու են տարբեր քաղաքացիների բերման ենթարկել, կալանավորել, եւ այսպես շարունակ: Ես մշտապես ասել եմ, այսօր էլ ասում եմ՝ չի կարելի հավասարվել Նիկոլ Փաշինյանին: Մարդն ի ծնե մեծաբերան է, պոռոտախոս է: Նա վախկոտ է, ծնկի եկող, սակայն հետագայում այդ ամենը հակառակ կողմից ներկայացնող ու հպարտացող: Դա գենետիկ հատկանիշ է: Չի կարելի գնալ-հավասարվել նրան: Որոշ քաղաքական գործիչներ հավասարվում են այս մարդուն եւ խոսում են նրա՝ նիկոլական բառապաշարով: Նման բան չի կարելի անել: Նիկոլի արարքներին պետք է պատասխանել քվեախցում: Չպետք է քաղաքական փոխհարաբերությունների խոսույթն իջեցնել, հավասարեցնել Փաշինյան Նիկոլի մակարդակին: Մեր նպատակը պետք է լինի այդ մակարդակից հրաժարվելը: Պառակտումը պետք է վերացնել, չարությունը փոխարինել բարությամբ: Նիկոլն ու նիկոլականները խոսում են լկտի բառապաշարով, եւ եթե ընդդիմադիրներն էլ խոսեն այդ բառապաշարով, ապա հանրությունը չի կարող նրանց միջեւ տարբերություն դնել: Նա դիտավորյալ մարդկանց նյարդերի հետ է խաղում, դիտավորյալ վիրավորում է ու մարդկանց ընտանիքներ է անգամ ներխուժում, բայց ընդդիմադիրները չպետք է նույն բանն անեն, որովհետեւ Նիկոլը նույն Նիկոլն է: 1996 թվականից նա նույն ճղճիմն ու ճղճղանն է, նույն՝ հորմոնալ խախտումներով ծնվածը.... չի կարելի այդ մարդու առաջարկած ճանապարհով գնալ: Նրան պարզապես պետք է հեռացնել:

- Ակնհայտ է, որ Սամվել Կարապետյանից, Միքայել սրբազանից վախեր ունի, իսկ ո՞րն է շարքային քաղաքացիներին կալանավորելու նպատակը:

- Նա այլախոհությունից, ընդդիմախոսությունից ահավոր վախենում է, եւ դա գալիս է իշխանությունը պահելու վախից: Նա վախենում է ցանկացած մարդուց, որն ունի ընդդիմադիր կեցվածք: Նա տառապում է իդեալական լինելու բարդույթով, եւ դրա համար էլ իրեն թվում է, թե ինքն ամենալավ ղեկավարն է, մինչեւ իր՝ իշխանության գալը պետականություն չի ունեցել Հայաստանը: Անգամ ասում է, որ Արցախը հանձնեց, որ վերագտնի Հայաստանը: Նրանից ինչ տեսակ աբսուրդ ասես՝ կլսես: Նրան գնահատականներ պետք է տան հոգեբույժները: Ես իրավաբան եմ եւ կարող եմ միայն ասել, որ այս բոլոր գործողությունները կործանում են մեր հայրենիքը:

- Նորից սկսել է սպառնալ՝ Քոչարյանին բանտարկել, Սամվել Կարապետյանին «բոմժ սարքել», Ծառուկյանի որդուն բանտ տանել:

- Նա իրավունք չունի նման հայտարարություններ անելու, սակայն իշխանության գալու առաջին իսկ օրվանից մարդկանց ասֆալտին է ծեփում... Դա այս մարդու էությունն է: Աշխարհում կա՞ մի այլ երկիր, որն ունի նման ղեկավար: Նա եւ արտաքուստ է թշվառ, եւ ներքուստ: Նրան չեն հարգում, չունի որեւէ ազդեցություն: Գոռալով, ճվճվալով, ընդդիմադիրներին կալանավորելով չես դառնում ազդեցիկ: Մարդն ազդեցիկ է դառնում, հեղինակություն է ձեռք բերում այլ գործողություններով:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ինչ է արել «Պատիվ ունեմ»-ը իր տեղերը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բաշխել է տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովների նախագահի, քարտուղարի եւ անդամների պաշտոնները՝ ԱԺ-ում խմբակցություն ունեցող կուսակցության եւ դաշինքների միջեւ: Ըստ այդմ՝ ՔՊ-ն ստացել է 1331, «Հայաստան» դաշինքը՝ 543, «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 131 հանձնաժողովի նախագահի ու քարտուղարի պաշտոն: «Հայաստան» դաշինքը, քանի որ մասնակցում է ընտրություններին, լրացրել է այս տեղերն ընտրական հանձնաժողովներում: ԿԸՀ մամուլի քարտուղար Սեդա Ղուկասյանը մեզ հայտնեց, որ հանրապետությունում կա 2005 ընտրատեղամաս, յուրաքանչյուր տեղամաս ունենալու է 8 անդամ, որից 6-ին նշանակում են խորհրդարանում խմբակցություն ունեցող կուսակցություններն ու դաշինքները, իսկ 2-ին՝ ընտրատարածքները: «Եթե հաստիքները թափուր են մնում, ընտրատարածքներն են հանձնաժողովի նախագահի ու քարտուղարի համալրումն իրականացնում: Այս պահին դեռ ունենք թափուր հաստիքներ, եւ շարունակվում է դրանց համալրման գործընթացը»,- ասաց նա՝ նշելով, որ գործընթացն ամփոփելուց հետո հստակ թվեր կնշեն, թե որ քաղաքական ուժը քանի հաստիք է լրացրել:

Թեեւ «Պատիվ ունեմ» դաշինքն այս ընտրություններին չի մասնակցում, եւ ընտրապայքարից դուրս են նաեւ դաշինքի անդամ կուսակցությունները՝ «Հայրենիք»-ը եւ ՀՀԿ-ն, սակայն տեղեկացանք, որ նրանք իրացրել են Ընտրական օրենսգրքով իրենց վերապահված իրավունքն ու հանձնաժողովներում համալրել իրենց հատկացված հաստիքները: ՀՀԿ ԳՄ անդամ Ռուբեն Թադեւոսյանը մեզ ասաց. ««Պատիվ ունեմ» դաշինքի կողմից ԸԸՀ պաշտոնները լրացվել են արդեն «Հայրենիք» կուսակցության եւ Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից»: Մեր տեղեկություններով, աշխատանքը կատարվել է համատեղ՝ ԲՀԿ-ի եւ «Ուժեղ Հայաստանի» հետ միասին, եւ հանձնաժողովների անդամներին հանձնարարվել է պաշտպանել ընդդիմության քվեները, քվեարկության ու հաշվարկի ժամանակ էլ համագործակցել ընդդիմադիր կուսակցությունների վստահված անձանց ու շտաբների հետ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ Է

ԵԱՏՄ

Նախընտրական թեժ աժիոտաժի մեջ գտնվող իշխանականներն այս օրերին տագնապալից սպասումներ ունեն ոչ միայն հունիսի 7-ի ընտրություններից, այլեւ մայիսի 28-29-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայանալիք ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստից: Գաղտնիք չէ, որ հայ-ռուսական հարաբերություններում, մեղմ ասած, լարված իրավիճակ է, որը տեսանելի դարձավ Նիկոլ Փաշինյանի մոսկովյան վերջին այցից եւ ԵՄ գագաթնաժողովից հետո, որը կայացավ Երեւանում՝ մայիսի 4-5-ը: Այդ լարվածության արդյունքում Ռուսաստանը կոշտացրեց իր հռետորաբանությունը եւ հայ գործարարների արտադրանքի նկատմամբ սանկցիաներ սկսեց կիրառել: Նախորդ շաբաթ էլ ռուսական կողմը Պուտինի շուրթերով օրակարգ բերեց Հայաստանի արտաքին քաղաքական ընտրության թեման՝ ՀՀ իշխանություններից պահանջելով կողմնորոշվել. կա՛մ մնում եք ԵԱՏՄ-ում՝ հրաժարվելով ԵՄ-ին անդամակցելուց, կա՛մ դուրս եք գալիս, եւ սկսվում է «փափուկ ապահարզանի» պրոցեսը: Նա բաց տեքստով հայտարարեց, որ ԵՄ-ին միանալու Հայաստանի ծրագրերը «հատուկ դիտարկում են պահանջում»: ՌԴ-ն, ըստ նրա, կսատարի այն ամենին, ինչը շահավետ է հայ ժողովրդին: Նույնիսկ առաջարկեց հանրաքվե անել, որ հայ ժողովուրդը որոշի: Նաեւ հիշեցրեց, որ Հայաստանի հետ ապրանքաշրջանառությունը նվազել է. անցած, նախանցած տարիներին շատ ավելին էր, բայց, այնուամենայնիվ, 2025-ին եղել է 7 միլիարդ դոլար. «Եթե հաշվի առնենք, որ երկրի ՀՆԱ-ն 29 միլիարդ է, դա լուրջ մեծություն է, եւ Հայաստանը նշանակալի առավելություններ է ստանում ԵԱՏՄ շրջանակներում»:

Պուտինի կարծիքով՝ թե՛ Հայաստանի, թե՛ ՌԴ-ի համար ճիշտ կլիներ հնարավորինս շուտ կողմնորոշվելը, եւ առաջարկեց Նիկոլ Փաշինյանին՝ մինչեւ ԵԱՏՄ հաջորդ գագաթնաժողովը՝ մայիսի 28-29-ը, որոշում կայացնել: Սակայն Փաշինյանը հայտարարեց, որ չի մասնակցելու մայիսի 28-29-ին Աստանայում կայանալիք ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստին, եւ դա բացատրեց քարոզարշավով: Նրա փոխարեն Աստանա կմեկնի փոխվարչապետ Միեր Գրիգորյանը:

Իշխանական մեր աղբյուրներից տեղեկացանք, որ այդ նիստից ՀՀ իշխանությունները բավականին տագնապալից սպասումներ ունեն, տարբեր խողովակներով ինֆորմացիա են ստացել, որ Հայաստանի նկատմամբ ՌԴ-ն որոշակի քայլեր է ձեռնարկել, որոնք կգաղտնազերծեն այդ օրը: Այդ օրը անգամ կարող է հայտարարեն Հայաստանին ԵԱՏՄ-ից դուրս թողնելու մասին, թեեւ կառույցը պետք է ընդունի կոնսենսուսային որոշում, եւ Հայաստանը կարող է վետո դնել այդ որոշման վրա ու ՀՀ տնտեսությունը որոշ ժամանակով փրկել կազմաքանդումից, սակայն, իշխանական աղբյուրների փոխանցմամբ, նման սցենարի պարագայում իրենք հասկանում են դրա հետեւանքները, եւ որ ՌԴ-ն այլ գործիքակազմերով այնպիսի խնդիրներ կստեղծի Հայաստանի համար, որը համարժեք կլինի ԵԱՏՄ-ից վտարելուն, օրինակ՝ տեխնիկական եւ սանիտարական կարգավորումների դաշտում, իսկ ծայրահեղ դեպքում Հայաստանի մասով կանոնակարգային խմբագրումների կդիմեն:

Չնայած իշխանությունում լավատեսների մի խումբ հույս ունի, որ շատ արագ ռուսական շուկային այլընտրանք կգտնեն՝ ի դեմս Ադրբեջանի, որի ներկայացուցիչների հետ ապրանքաշրջանառությունը զարգացնելու հարցով շաբաթներ առաջ անգամ Հայաստան ժամանեց Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը՝ իր հետ բերելով ադրբեջանցի գործարարների, որոնք Աղվերանում հանդիպում ունեցան հայ գործարարների հետ եւ փակ ֆորմատով քննարկեցին այդ հարցերը: Սակայն մեծ հաշվով հասկանում են, որ հեշտ եւ արագ չի լինելու Հայաստանի տնտեսական կախվածությունը Ռուսաստանից նվազեցնելու գործընթացը, իսկ ԵԱՏՄ-ից մեկուսանալը, չունենալով այլընտրանքային շուկա, կնշանակի տնտեսական լուրջ ճգնաժամի առաջ կանգնել եւ ՀՀ տնտեսությունն ու ներկա կենսամակարդակը հիմնովին վտանգել: Մանավանդ՝ եթե հաշվի առնենք, որ առաջին սանկցիան լինելու է գազի գնի բազմապատկվելու տեսքով:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ «ՌԱԶԲՈՐԿԱՆԵՐ», ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԼԻՔ

Հայաստանում նախընտրական մթնոլորտը հիշեցնում է ոչ թե ժողովրդավարական սովորական գործընթաց եւ քաղաքական ուժերի առողջ մրցակցություն, այլ՝ իշխանության կողմից վերահսկվող քաղաքական պրոցես, որն աչքի է ընկնում ճնշումներով, քաղաքական հետապնդումներով, իրար վրա ցեխ շպրտելով, սպառնալիքներով ու հայհոյախոսությամբ: Վերջին ամիսներին ընդդիմադիրների նկատմամբ իրականացվող ձերբակալությունները, խուզարկությունները եւ քրեական վարույթներն այնպիսի ծավալների են հասել, որ արդեն դժվար է դրանք դիտարկել որպես պարզապես «օրինականությանն ուղղված գործընթաց»:

Ընդդիմադիր դաշտում համոզված են՝ Նիկոլ Փաշինյանի իշխանությունն ընտրություններից առաջ փորձում է ուժային մեթոդներով թուլացնել իր հիմնական քաղաքական մրցակիցներին: Հատկապես թիրախավորվել է «Ուժեղ Հայաստան» դաշինքը, որի լիդերը տնային կալանքի տակ է, եւ որի շուրջ ձեւավորվող քաղաքական ակտիվությունը վերջին ամիսներին զգալիորեն աճել է: Պարզ է, որ ՔՊ-ին ծառայող եւ Նիկոլ Փաշինյանի հրահանգները կատարող իրավապահները հենց այնպես չեն իրականացնում ամենօրյա խուզարկությունները, ցուցադրական ձերբակալությունները եւ հրապարակային մեղադրանքները:

Ապրիլի 17-ին Հակակոռուպցիոն դատարանի մոտ տեղի ունեցած բողոքի ակցիայից հետո ձերբակալվեց 17 մարդ: Իշխանությունը հայտարարեց, թե տեղի են ունեցել հասարակական կարգի խախտումներ, սակայն, ընդդիմադիրների խոսքով, դա պարզապես ընդդիմադիր հավաքը ճնշելու քայլ էր: Հաջորդիվ՝ ընտրակաշառքի եւ «նյութական շահագրգռման» գործերով ձերբակալվեցին «Ուժեղ Հայաստան» դաշինքի մի շարք անդամներ եւ ակտիվիստներ՝ Վերժինե Ստեփանյանը, Գոհար Ղումաշյանը, Արթուր Ավանեսյանը՝ Կանդազը:

Տարբեր օրերի բերման ենթարկվեցին նաեւ այլ անձինք՝ Արսեն Մանուկյանը, Կարեն Հովհաննիսյանը, Նարեկ Սահակյանը, մի շարք մարզային համակարգողներ եւ կամավորներ: Իրավապահները նրանց մեղադրում էին ընտրողների վրա ապօրինի ազդեցության եւ նյութական խոստումներ տալու համար, մինչդեռ ընդդիմադիրները պնդում են, որ խոսքը քաղաքական աշխատանքի քրեականացման մասին է: Անհատական ձերբակալություններից զատ, իրականացվում են նաեւ խմբային բերման ենթարկելու տեսարաններ, հատկապես՝ մարզային կառույցների ակտիվացման ժամանակահատվածում:

Տարբեր օրերի միաժամանակ բերման են ենթարկվել նաեւ կուսակցության տարածքային գրասենյակների մի քանի աշխատակիցներ եւ աջակիցներ: Ապրիլի վերջին իրավապահները խուզարկություններ արեցին «Ուժեղ Հայաստան» դաշինքի Ավանի գրասենյակում, որտեղից բերման ենթարկվեց մի քանի ակտիվիստ: Ընդդիմադիրները սա գնահատեցին որպես նախընտրական շտաբների աշխատանքը կաթվածահար անելու փորձ՝ վախի մթնոլորտ ստեղծելու նպատակով: Ձերբակալությունների ֆոնին գրեթե բոլոր դեպքերում իշխանամետ մեդիայում հայտնվում էին արագ «արտահոսքեր»՝ ձայնագրություններ, կադրեր կամ մեղադրական տեղեկություններ, որոնք հրապարակվում էին մինչեւ դատական որոշումներ ունենալը: Սակայն դրանց մեծ մասում չի նշմարվում կաշառքի կամ որեւէ այլ ապօրինի գործողության ապացույց: Սա ընդդիմությունը որակում է որպես հանրային դատավարություն՝ առանց դատարանի:

Վերջին օրերին ճնշումներ են սկսվել նաեւ այլ ընդդիմադիր ուժերի նկատմամբ: Մայիսի 14-ին խուզարկություններ կատարվեցին «Հայաստան» դաշինքի Սպիտակի գրասենյակում: Բերման ենթարկվեց գրասենյակի ղեկավար Մացակ Մաթոսյանը, սակայն դատարանը մերժեց կալանքի միջնորդությունը, եւ նա ազատ արձակվեց նիստերի դահլիճից:

Վերջին ամիսներին բերման ենթարկելու նմանատիպ դեպքեր եւ հարցաքննություններ իրականացնելու դեպքեր արձանագրվել են նաեւ այլ ընդդիմադիր կառույցների անդամների նկատմամբ՝ Գյումրիում, Վանաձորում, Աբովյանում գործող տեղի ակտիվիստների շրջանում: Մայիսի 15-ին էլ մեկ ամսով կալանավորվեց ընդդիմադիր բլոգեր Արտակ Ավետիսյանը՝ Նիկոլ Փաշինյանին «դավաճան» ասելու համար:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՎԱԽԵՑՆԵԼՈՒ, ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ԴԱՇՏ ՆԵՐՔԱՇԵԼՈՒ ԵՎ ՊԱՌԱԿՏԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ ԿԱ

*«Հրապարակի» զրուցակիցն է իրավապաշտպան **Զառա Հովհաննիսյանը**:*

- Խորհրդարանական ընտրությունների քարոզարշավը թեժ փուլում է, Փաշինյանը սպառնում է Ռոբերտ Քոչարյանին եւ Գագիկ Ծառուկյանի որդուն ազատազրկել: Արդյո՞ք դրանով չի ուղղորդում իրավապահ համակարգին՝ իր հակառակորդներին ճնշելու համար:

- Քարոզարշավի որակը սարսափելի ցածր է, մի կողմից՝ դա ինչ-որ տեղ ուռճացվում է, մյուս կողմից՝ սպառնալիքներ են հնչեցվում, բայց, իհարկե, պետական պաշտոնյայի նկատմամբ պահանջները շատ ավելի բարձր են, քան շարքային՝ այլ անձանց, որոնք, օրինակ, քարոզարշավին մասնակցում են եւ կարող են իրենց նույնիսկ պատշաճ չպահել: Այս դեպքում Նիկոլ Փաշինյանի խոսույթն ինձ համար շատ ավելի անընդունելի է, որովհետեւ ինքը պետական պաշտոնյա է, եւ պետական պաշտոն զբաղեցնողի տեսանկյունից ու էթիկապես այդպիսի բառապաշարով խոսելն ընդունելի չէ եւ նաեւ՝ սպառնալիքներ հնչեցնելը՝ քրեական վարույթների տեսանկյունից: Մյուս կողմից էլ՝ անվստահություն է արտահայտվում պետական համակարգի նկատմամբ, իրավապահ համակարգի նկատմամբ, որ միայն պետք է ուղղորդված լինի գործադիր իշխանության կողմից, որպեսզի պետական համակարգում որեւէ վարույթ իրականացվի: Մասնավորապես, եթե կային նման հանցագործություններ, 8 տարի իշխանությունն ինչո՞վ էր զբաղված, եւ ինչո՞վ է զբաղված, ընդհանրապես՝ իրավապահ համակարգը, որ մինչ այժմ այդ անձինք, ովքեր իրականացրել են հանցագործություն, չեն պատժվել կամ էլ, օրինակ, եթե փախուստի մեջ են, պատշաճ ընթացակարգերով չեն վերադարձվել Հայաստանի Հանրապետություն: Այսինքն, դա քարոզարշավի նյութ չէ ընդհանրապես եւ եթե դառնում է քարոզարշավի նյութ, ապա դա ի շահ համակարգի բացարձակապես դիտարկել հնարավոր չէ, որովհետեւ դա ցույց է տալիս, որ պատշաճ չի գործել իրավապահ համակարգը եւ այժմ դարձել է քարոզարշավի համար ուղղակի շահարկման առարկա: Շահարկվում է, որ պիտի գործադիր իշխանությունն ուղղորդի իրավապահ անկախ համակարգին՝ գործել ըստ օրենքի եւ ընթացակարգերի:

- Նիկոլ Փաշինյանը նաեւ իրեն հակադրվող հասարակ քաղաքացիների հետ շփման ժամանակ է քողարկված սպառնալիքներ հիշեցնող հայտարարություններ անում: Ինչպե՞ս եք գնահատում նրա այս պահվածքը:

- Իրականում, քաղաքացիների խոսքի ազատության հետ կապված շահարկումները եւս անընդունելի են: Նախկինում իշխանությունը մերժվել է հենց այդ պատճառով, որ եւ եղել է սպառնալիք հասարակության նկատմամբ, եւ, իսկապես, եղել են բռնություններ, որ մարդիկ չէին կարող արտահայտվել կամ վախենում էին արտահայտվել: Եղել են դրանք: Ես նրանցից չեմ, որ վախեցել եմ, ես միշտ եմ խոսել: Հարցն այն է, թե ինչպես է ՀՀ քաղաքացիների ազատ խոսքին արձագանքում Հայաստանի դեմոկրատական ղեկավարը: Որը ոչ թե հիշեցնում է, որ ձեզ կարող են ծեծել դրա համար, այլ կարողանում է ադեկվատ պատասխաններ գտնել կամ կարողանում է համոզել, կամ էլ առնվազն փորձում է չսպառնալ:

- Հետեւաբար, Ձեր գնահատականը ո՞րն է Փաշինյանի այս պահվածքին, հատկապես՝ սովորական քաղաքացիների առնչությամբ:

- Ընդհանրապես, քարոզարշավին իմ գնահատականը շատ բացասական է, որովհետեւ քարոզարշավը պիտի լինի հանրությանը բացատրելու, ծրագրեր ներկայացնելու եւ հանրության կողմից դրական գնահատական ստանալու մղում եւ ոչ թե մեղադրելու, թիրախավորելու, սպառնալու լեզու: Այսօրվա քարոզարշավն ունի ոչ թե ընդհանրապես հասարակությունից ձայներ ակնկալելու միտում, այլ հասարակությանը վախեցնելու, սպառնալիքների միջոցով այս կամ այն դաշտ ներքաշելու եւ հիմնականում պառակտելու միտում:

- Հիմնականում իշխանության կողմից է այդ միտումը:

- Բոլորի կողմից է արվում, ո՞րն է լավ քարոզարշավ տանում:

- Իշխանության ձեռքում են բոլոր լծակները, նրանք են սպառնում, պառակտում...

- Մի խնդիր կա. իշխանությունից սպասելիքները շատ ավելի բարձր են, քան մյուսներից, եւ իշխանության պատասխանատվության աստիճանն այս ամենի տեսանկյունից շատ ավելի բարձր է, եւ իշխանությունն է այդ տոնայնությունը փոխանցում մյուս բոլորին, որոնք ներքաշվում են նույն խոսույթի մեջ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՔՊ-Ն ՄԵԿ ՏԱՐՈՒՄ 846 ՄԼՆ 608 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է ՈՒՆԵՑԵԼ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ԿԸՀ է ներկայացրել կուսակցության հայտարարագիրը: Կուսակցությունը հանրապետությունով մեկ 336 գրասենյակային տարածք է վարձակալել: Հայտարարագրում նշված է, որ ՔՊ-ն «Սիվիկ նյուզ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերն է: Որպես եկամուտ՝ կուսակցությունը հայտարարագրել է 234 մլն 727 հազար 890 դրամ, որը ՔՊ-ի հաշվին է փոխանցել Ազգային ժողովը՝ որպես պետական ֆինանսավորում: Սա այն գումարն է, որ պետությունից ստանում են ընտրություններում հաղթած կուսակցությունները: 481 մլն 790 հազար 400 դրամ, այսինքն՝ 1 մլն 200 հազար դոլարից ավելի իշխող կուսակցությունը նվիրատվություն է ստացել տարբեր անձանցից: Որքան էլ որ այս գումարը մուտքագրվել է կուսակցության բյուջե, այստեղ մեծ կոռուպցիոն ռիսկեր կան: Որպես անդամավճար՝ ՔՊ անդամներից ստացել է ընդամենը 129 մլն 524 հազար 599 դրամ: Այլ մուտքեր էլ կան. «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն, պարտվելով դատարանում, որպես դատական ծախսերի փոխհատուցում, վճարել է 120 հազար դրամ, «24 նյուզ» ՍՊԸ-ն՝ 446 հազար դրամ: Այսպիսով, ՔՊ-ի ընդհանուր եկամուտները մեկ տարում կազմել են 846 մլն 608 հազար 889 դրամ: Այդ գումարից հայտարարագիր ներկայացնելու պահին եղել է 127 մլն 898 հազար 665 դրամ:

Նշենք, որ «Կուսակցությունների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, 3 տոկոսի շեմը հաղթահարած կուսակցություններին՝ ըստ ստացած ձայների, գումար է հատկացվում բյուջեից: Ընդհանուր՝ 520 մլն 733 հազար դրամը բաշխվել է փուլային եղանակով՝ ըստ եռամյակների: ՔՊ-ին տրամադրվել է 268 մլն 309 հազար, «Հայաստան» դաշինքին՝ 163 մլն 221 հազար, ԲՀԿ-ին՝ 50 մլն 444 հազար դրամ: Գումար է հատկացվել նաեւ «Հանրապետություն» կուսակցությանը՝ 38 մլն 758 հազար դրամ, թեեւ վերջինս ԱԺ-ում մանդատներ չուներ, բայց նախորդ ընտրությունների ժամանակ ստացել էր ձայների 3.04 տոկոսը:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀՆԴԻԿՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՄԱՅՆՔ ԵՆ ԴԱՐՁԵԼ, ԱՆԳԱՄ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ ԵՆ ԱՆՈՒՄ



Մայիսի 7-ից Իջեւանի նախկին հանրախանութի շենքի 2-րդ հարկում գործող «ԻՋ գրանդ տեքստիլ» ընկերության հնդիկ բանվորները բողոքի ակցիաներ են անում: Նրանք համացանցում տարածել են իրենց պայքարի վերաբերյալ տեսանյութեր, որտեղ նրանցից մեկը ցույց է տալիս իր ձեռքերի, մարմնի տարբեր հատվածների վնասվածքները, պատռված հագուստը: Տեսանյութերից մեկում ոստիկանը նրան հրելուց կամ մեկ այլ պատճառով վայր է ընկնում: Հնդիկ կարողների բողոքի ցույցն Իջեւանում ավարտվել է մեկ անձի ձերբակալությամբ, պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու հոդվածով: Հնդիկ բանվորը ձերբակալվել է, նախաքննություն է կատարվում, հայտնի չէ՝ ձերբակալված բանվորը կկալանավորվի՞, թե՞ ոչ: Հնդիկ բանվորների բողոքի գործողություններն արդեն տեւական ժամանակ պարբերաբար տեղի են ունենում: 2025-ին նրանք աշխատավարձի բարձրացում էին պահանջում: Որո՞նք են հիմա նրանցպահանջները, նրանց դժգոհության պատճառները: Իջեւանի կարի արտադրամասում աշխատող լավատեղյակ աղբյուրը նշեց, որ վերջերս փոխվել է ռուսական ընկերության ղեկավարությունը, նախկինում այդ արտադրամասը ղեկավարում էին Թիմուր անունով ռուս տնօրենը եւ Իջեւան քաղաքից Միեր Միրզոյանը: Նրանք գերադասում էին հնդիկ բանվորների հետ լոյալ լինել, բավարարել նրանց պահանջները, որոնք վերաբերում էին աշխատանքային եւ կենցաղային պայմաններին: Թիմուրը եւ Միեր Միրզոյանն այլեւս չեն աշխատում ռուս սեփականատիրոջը պատկանող ձեռնարկությունում, որի արտադրանքը, այդ թվում՝ տաք հագուստները, արտահանվում են Ռուսաստան: Արտադրամասի նոր ղեկավարը Ղրիմից է՝ Դելավեր անունով, ազգությամբ թաթար, որը հետամուտ է հնդիկների կողմից աշխատանքային կարգապահության պահպանմանը: Կարի արտադրամասը գործում է 7 տարի, 3.5 տարի է՝ այդտեղ հնդիկ բանվորներ են աշխատում: Մոտ 170 հնդիկ կարողներ աշխատում են 18-20 հոգանոց խմբերով, որոնց ղեկավարում են բրիգադիրները: Նույն արտադրամասի տարածքում, սակայն՝ առանձին հատվածում, աշխատում է Իջեւան քաղաքից եւ համայնքի գյուղերից մոտ 40 հայ կին: Այդ կանայք վարձատրվում են գործարքային ձեւով՝ իրենց կարած արտադրանքի հաշվարկով: Իսկ հնդիկ կարողները վարձատրվում են աշխատաժամանակի համար, բոլորի բանկային քարտերին ամեն ամիս փոխանցվում է 500 ԱՄՆ դոլար: Հնդիկների վերջին բողոքի առիթը եղել է ոչ միայն ցածր աշխատավարձը, այլեւ՝ այն, որ աշխատանքային ժամերին իրենց հեռախոսները հավաքում են, որ նրանք հեռախոսից օգտվեն միայն ընդմիջման ժամին կամ աշխատանքից հետո: Մեր աղբյուրը հայտնեց, որ շատ հնդիկ բանվորներ հագուստ կարել չեն կարողացել, դա Իջեւանում են սովորել, ոմանք մինչեւ հիմա չեն կարողանում որակ ապահովել: Արտադրամասի տնօրինությունը կարծում է, որ հնդիկ բանվորներն աշխատանքի ժամին հեռախոս, բլյութութ միացնելով, երաժշտություն լսելով՝ ժամանակ են ձգում, գլուխ են պահում, քանի որ կարեւոր չէ, թե քանի կտոր կկարեն եւ ինչքան արդյունք կտան:

2025թ. օգոստոսին ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանն այցելեց Իջեւան, այդ ժամանակ դեսպանի աջակցությամբ կարի արտադրամասի հնդիկների աշխատավարձը 450 դոլարից բարձրացավ 500 դոլարի: Արտադրամասի տնօրինությունը հնդիկներին ապահովել է արտադրամասին կից կացարանով, ամեն շաբաթ յուրաքանչյուր կարող հնդիկի սննդի համար սեփականատերը հատկացնում է նաեւ 1500 ռուսական ռուբլուն համարժեք լրացուցիչ գումար: Արտադրամասի տարածքի վարձակալության համար ընկերությունն իջեւանցի սեփականատիրոջը վճարում է ամսական 1 միլիոն 200 հազար դրամ: Նման մեծ ծախսեր անող ընկերության տնօրինությունը հետամուտ է, որ հնդիկ բանվորները շատ արտադրանք թողարկեն, ոչ թե աշխատանքի ընթացքում հեռախոսով խոսեն, ժամանակ ձգեն: Հնդիկներն աշխատում եւ գործում են որպես սոցիալական թիմ՝ համախմբված եւ իրենց շահերը պաշտպանելով: Նրանք պահանջում են, որ բոլոր հնդիկները նույն չափի աշխատավարձ ստանան: Հնդիկ կարողների մեջ կան լիդերներ, որոնց հրահանգով են, որպես կանոն, սկսվում բողոքի գործողությունները:

Այս պարագայում, իհարկե, ճիշտ կլինի, որ հնդիկ կարողները, իջեւանցի կին կարողների նման, իրենց կարած արտադրանքի հաշվով՝ գործարքային աշխատավարձ ստանան, այդ դեպքում նրանք չէին դժգոհի 11-ժամյա աշխատանքից, գործի ընթացքում իրենցից հեռախոսները վերցնելուց եւ այլնից եւ շահագրգռված կլինեին լավ աշխատել, շատ արտադրանք տալ: Այդ դեպքում կքննարկվեր միայն աշխատավարձի չափը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՅՆ

ԵՐԲ ՄԱՐԴՆ ԻՆՔԸ ԱՆԿԱԽ ՈՒ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՉԷ, ՆՐԱ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԵՐԿԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՅԴՊԻՍԻՆ ԼԻՆԵԼ

Այն պահից, երբ Փաշինյանը սկսեց բարեկամություն անել Ադրբեջանի հետ եւ, որպես բարեկամության նշան, սկսեց բենզին եւ դիզվառելիք ներմուծել Ադրբեջանից, Արմավիրի բենզալցակայաններից մեկի՝ «Լեգենդայի» բենզինի լիցքավորման սարքավորումների վրա հայտնվեցին գրություններ, որոնք հայտնում են, թե որ երկրից ներմուծված բենզին ու դիզվառելիք է վաճառվում: Սա արվում է ի գիտութուն սպառողների, որ տեղեկացված եւ վստահ լինեն, որ իրենց կողմից լիցքավորվող բենզինը կամ դիզվառելիքն ադրբեջանական չէ, Փաշինյանի եւ Ադրբեջանի բարեկամության արդյունքը չէ: Այդ օրվանից սկսած, մարդիկ իմացան, որ բենզինը Հայաստան ներմուծվում է Ռումինիայից, Կիպրոսից, Բելգիայից, դիզվառելիքը՝ Իսրայելից: Տեսեք, թե որտեղ է Հայաստանը, որտեղ են Իսրայելը, Բելգիան կամ նույնիսկ Կիպրոսն ու Ռումինիան: Այս երկրները խոշոր նավթարդյունահանողներ չեն, բոլորն էլ նավթ ներմուծող երկրներ են, նավթը ներմուծում են, վերամշակում եւ վերաարտահանում՝ դրանից հսկայական շահույթ ստանալով: Տրամաբանական հարց է, չէ՞, առաջանում՝ ինչո՞ւ Հայաստանը չունի սեփական նավթավերամշակում, ինչո՞ւ է նավթամթերք գնում այլ երկրներից, երբ կարող էր ինքն արտադրել բենզին, դիզվառելիք, կերոսին կամ բիտում, ինքը բավարարել սեփական կարիքները, ինչո՞վ է Հայաստանը տարբերվում Բելգիայից կամ Իսրայելից: Պատասխանը շատ կոնկրետ է. Հայաստանը չունի ինքնիշխանություն, Հայաստանի արտաքին կառավարիչները դա թույլ չեն տալիս:

Տեսականորեն, Հայաստանը կարող էր ունենալ նավթավերամշակում, ճիշտ է՝ Հայաստանը չունի նավթի սեփական արդյունահանում, Հայաստանում չկան նավթահորեր, սակայն Հայաստանը սահմանակից է Իրանին, որը ոչ միայն նավթ արդյունահանող երկիր է, այլեւ՝ արտահանող: Հայաստանը կարող էր Իրանից նավթամուղ կառուցել Հայաստան, այնպես, ինչպես գազամուղ, եւ նավթամուղի վրա նավթի վերամշակման գործարան կառուցել: Մասնագետներն ասում են, որ մի ժամանակ նույնիսկ այդպիսի ծրագիր եղել է, բանակցություններ են վարվել, համաձայնություն են ստորագրել, բայց այն այդպես էլ կյանքի չի կոչվել: Պատճառը մեկն է՝ Իրանը եւ հատկապես Իրանի նավթարդյունաբերությունը գտնվում են արեւմտյան պատժամիջոցների տակ, Միացյալ Նահանգներն արգելում է, որ իր ենթակայության տակ գտնվող երկրներն Իրանից նավթ գնեն, այդ նավթը վերամշակեն եւ օգտագործեն: Հայաստանն էլ, որպես ամերիկյան տիրապետության տակ գտնվող տարածք, չի կարող անտեսել այդ հրահանգները եւ սրբորեն պահպանում է դրանք: Ահա թե ինչպիսի տեսք ունի Հայաստանի, այսպես կոչված, անկախությունը կամ ինքնիշխանությունը, երբ երկիրն առաջնորդվում է ոչ թե իր տնտեսական շահերով, այլ՝ արտաքին թելադրանքով: Թո՞ւյլ են տալիս ինչ-որ ծրագիր իրականացնել՝ ուրեմն կիրականացնես, եթե թույլտվություն չկա, ուրեմն պետք է խելոք ենթարկվել:

Չնայած ամերիկյան պատժամիջոցներին, Իրանը նավթ արտահանում է հիմնականում Չինաստան, Հնդկաստան, Մալայզիա, նաեւ՝ հարեւան երկրներ՝ Պակիստան, Աֆղանստան, Թուրքիա: Ամերիկան չի կարող Չինաստանին արգելել՝ նավթ գնել Իրանից, որովհետեւ Չինաստանն իսկապես անկախ երկիր է, Աֆղանստանն էլ՝ ինքնիշխան երկիր, պատերազմում հաղթել է ամերիկացիներին ու ստիպել, որ ամերիկյան զորքն ու նրանց վարժեցրած ու նրանց ծառայող աֆղանցիները լքեն երկրի տարածքը: Թուրքիային արգելում է, բայց Թուրքիան սահմանափակ քանակությամբ գնում է, նշանակում է՝ Թուրքիայի անկախությունն էլ է սահմանափակ, 100 տոկոսանոց չէ: Հայաստանի կախվածությունը 100 տոկոսանոց է:

Միացյալ Նահանգները ներկայացնում է, որ այդ պատժամիջոցները կիրառվում են ի բարօրություն ենթակա երկրների, մասնավորապես՝ ի բարօրություն Հայաստանի եւ հայ ժողովրդի, որ մենք էներգետիկ կախվածություն չունենանք բռնապետական Իրանից, այնպես, ինչպես արգելում է Ռուսաստանի հետ համատեղ նոր ատոմակայան կառուցելը, որովհետեւ Ռուսաստանը եւս բռնապետական է հռչակված, իսկ մենք չենք կարող բռնապետական Ռուսաստանից էներգետիկ անկախություն ունենալ: Ամերիկյան վասալները պետք է կախված լինեն միայն ԱՄՆ-ից: Դրա վառ վկայությունը Եվրոպայի էներգետիկ շուկան է. ԱՄՆ-ում գործող Էներգետիկայի, տնտեսագիտության եւ ֆինանսական վերլուծության ինստիտուտի տվյալների համաձայն, Մերձավոր Արեւելքում սկսված հակամարտության արդյունքում, շարունակվող էներգետիկ ճգնաժամի պայմաններում ԵՄ-ի կախվածությունը հեղուկացված բնական գազից (ՀԲԳ) աճում է: Ինստիտուտի կանխատեսումների համաձայն՝ Միացյալ Նահանգներն այս տարի կդառնա ԵՄ-ի առաջատար ՀԲԳ արտահանողը՝ գերազանցելով Նորվեգիային: Տարվա վերջին Միացյալ Նահանգները կկազմի ԵՄ-ի կողմից ներմուծվող հեղուկացված բնական գազի երկու երրորդը, իսկ 2028 թվականին՝ 80%-ը: Իսկ ո՞վ է սկսել հակամարտությունը Մերձավոր Արեւելքում՝ Միացյալ Նահանգները, ինչի՞ համար՝ որ դառնա ԵՄ գազի շուկայի 80 տոկոսի տերը: Հիմա հասկանում եք, չէ՞, թե ինչի համար են պատերազմները, եւ ում են դրանք ծառայում:



Թե չէ՝ Արցախը հանձնեցինք, Հայաստանն անկախացավ կամ ինքնիշխանություն ձեռք բերեց. Նիկոլ Փաշինյանը նման բառերը միայն գրել գիտի, բայց թե ինչ իմաստ ունեն դրանք, ո՛չ հասկացել է, ո՛չ էլ, ցավոք, կարող է հասկանալ, որովհետեւ, երբ մարդն ինքը անկախ ու ինքնիշխան չէ, նրա ղեկավարած երկիրը չի կարող այդպիսին լինել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԲ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ «ՍՆԿԻ ԳՈՐԾՈՎ» ՎՃԻՌԸ

Եվ այսպես, Նիկոլ Փաշինյանը դատի է տվել Սամվել Կարապետյանին: Այո, այո, «չինական սնկի» գործով: Երեւի հիշում եք, որ Սամվել Կարապետյանն ասել էր՝ Փաշինյանը Չինաստանից հալյուցինոգեն սունկ է բերել եւ ամեն անգամ ելույթ ունենալուց առաջ ուտում է դրանցից: Նիկոլ Փաշինյանն էլ՝ ոչ դես, ոչ դեն, դատի է տվել Սամվել Կարապետյանին՝ ակամա խոստովանելով, որ Կարապետյանի այդ հայտարարության մեջ ճշմարտության հատիկ, այնուամենայնիվ, կա: Որ ճիշտն ասեմ, ինքս էլ Սամվել Կարապետյանի ասածին շատ չեմ հավատում: Ինչո՞ւ պետք է Նիկոլ Փաշինյանը Չինաստանից 1,5 տոննա սունկ բերեր իր հետ՝ ջվալները լցրած, եթե այդ երկիրը հալյուցինոգեն դեղերի արտադրության հինավուրց ավանդույթներ ունի: Կարո՞ղ եք մի այնպիսի բանի անուն տալ, որ Չինաստանում չկա: Եվ, ուրեմն, ինչո՞ւ հենց 1.5 տոննա հալյուցինոգեն սունկ, եթե հայտնի է, որ կառավարական դաչաներում էլ դրանցից շատ կա: Հատկապես անձրեւից հետո՝ ինչքան ուզեք:

Ինչեւէ, Նիկոլ Փաշինյանը «չինական սնկի» գործով Սամվել Կարապետյանի դեմ դատական հայց է ներկայացրել, եւ մենք շուտով կիմանանք Նիկոլ Փաշինյանի ելույթներում հալյուցինացիաների առկայության իսկական պատճառների մասին: Այս գործը քննող դատավորին ես խորհուրդ կտայի կարդալ Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի եւ Լեռ Կամսարի ողջ գրական ժառանգությունը, ինչպես նաեւ՝ ծանոթանալ Նիկոլ Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը» հալյուցինահեն գրքի բովանդակությանը: Հարգելի դատարան, վստահեցնում եմ, դա ձեզ շատ կօգնի՝ քաղաքացի հայցվոր Փաշինյանի եւ քաղաքացի ամբաստանյալ Կարապետյանի միջեւ խաղաղություն հաստատելու գործում:

Ի դեպ, չմոռանամ ասել, որ Փաշինյանն էլ «տակ չէր մնացել» եւ սպառնացել էր Սամվել Կարապետյանին՝ հալյուցինացիաներ առաջացնող սունկ ուտեցնել: Այնպես որ, տեսնենք՝ ի՞նչ է լինելու, կհաջողվի՞ Նիկոլ Փաշինյանին սունկ ուտեցնել Սամվել Կարապետյանին, թե՞ դա էլ հերթական հալյուցինացիան էր, որի ազդեցությամբ նա սպառնում էր վարչապետի թեկնածու կամ, ինչպես ասում են՝ ապագա վարչապետ Սամվել Կարապետյանին:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ այլեւս, որ հայերը պատրաստվում են համապետական ընտրությունների: Բոլոր ուժերն էլ, անգամ Արամ Զ. Սարգսյանը, Արման Բաբաջանյանն ու Լեւոն Շիրինյանն են այս կամ այն կերպ հանդիպել իրենց «ընտրազանգվածների» հետ: Դե, Նիկոլի քարոզարշավի մասին էլ չեմ ասում, որ ավելի վաղ էր սկսվել, քան էդ բանը՝ ընտրապայքարը: Նկատի ունեմ ՔՊ-ի՝ եկեղեցիների դեմ արշավներն ու «պեռաշկի», «կուկուռուզ», «սուջուխ» օպերացիաները: Այստեղից բնական հարց է առաջանում՝ ճի՞շտ է վարվում, արդյոք, «ազատության» մեջ գտնվող եւ պետական արսենալով քարոզարշավ անող Նիկոլը, որ «չինական սնկի» մասին կատակի համար, թող որ՝ անհաջող, դատի է տալիս տնային կալանքի մեջ գտնվող իր մրցակցին: Մարդիկ ի՞նչ կմտածեն Նիկոլի մասին: Ի վերջո՝ «ճշտի» հարց էլ կա այստեղ: Ինչքան պիտի ճիվաղ լինես, որ մի հատ էլ լրացուցիչ դատի տաս «քաղկալանավորին»: Գործն էլ գործ լինի, ասես՝ հա…

Ես, ինչ է, պատճառներ չունե՞մ՝ նույն Նիկոլ Փաշինյանին դատի տալու: Վայ ձեր տունը շինվի… Որ դատի տամ, կտանեն հուր-հավիտյան կկորցնեն նրան: Բայց ես սպասում եմ ընտրությունների ավարտին: Մի հատ տեսնենք՝ ժողովուրդն ինչ է որոշում՝ հետո: Նիկոլը, սակայն, իմ չափ հեռատես չէ: Նա չի հասկանում մեր օրերի ժամանակացույցը, իրեն թվում է, թե դեռ 18 թիվն է, ու, հեսա-հեսա, մի վնգստացող դատավոր է գտնելու, որ Սամվել Կարապետյանին «պատժի»: Ես մի առիթով ասել եմ՝ Նիկոլ, օրացույցին 2026 թվականն է, եւ քո էշը վաղուց գնացել է: Բայց, ինչպես երեւում է, ասածս տեղ չի հասել: Այսօր կգտնվի՞ մի դատավոր, որ հանձն կառնի քննել այս ապուշ գործը ու մի բան էլ Նիկոլի օգտին որոշում կայացնել: Չեմ կարծում: Հայաստանում այսօր բոլորն են սպասում ընտրությունների արդյունքներին՝ սկսած դատախազից՝ մինչեւ վերջին պարեկը: Ո՞վ, ո՞ր դատավորը կհամարձակվի հաղթողի հիմնական թեկնածուի նկատմամբ «պատժական» որոշում կայացնել, այն էլ՝ հեռացող վարչախմբի գլավարի պահանջով: Այնպես որ, «չինական սնկի» գործով վճիռը կարձակվի ոչ շուտ, քան հունիսի 8-ը, եւ իր բովանդակությամբ շատ չի տարբերվի Սամվել Կարապետյանին տնային կալանքից անհապաղ ազատ արձակելու որոշումից:

ՀԳ. *Առձեռն ուղեցույց Նիկոլի եւ Նիկոլից ազատագրվող դատավորների համար. «Հալյուցինոգեն կամ ցնորածին սնկեր: Նաեւ՝ «հոգեծին», «մոգական», «կախարդական» սնկեր (անգլ.՝ psilocybin, psychedelic mushrooms, magic mushrooms, shrooms): Սնկի այն տեսակներն են, որոնց պտղամարմինը պարունակում է ցնորածին (պսիխոդելիկ) նյութեր: Այդպիսի սնկերի գործածումն ազդում է գիտակցության վրա եւ առաջ է բերում անհանգիստ վիճակ, որն անվանում են ցնորածին փորձառություն կամ «ուղեւորություն»: Հնագույն ժամանակներում ցնորածին սնկերը մարդկանց կողմից օգտագործվում էին կրոնական արարողությունների ժամանակ, ինչպես նաեւ՝ որպես հոգեխթանիչներ՝ ոչ մեծ չափաբաժիններով: Որոշ աղբյուրների համաձայն՝ ցնորածին սնկերի կանոնավոր անվերահսկելի գործածումը կարող է լուրջ բացասական հետեւանքներ ունենալ ինչպես հոգեկան աշխարհի, այնպես էլ ֆիզիոլոգիական առողջության համար: Կարծիք կա նաեւ, որ ցնորածին սնկերի գործածումը տվյալ մարդու հոգեկան առողջության հետ որեւէ կապ չունի»:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄԵԶ ՄՈՏ ԲԱՅԱՌԱՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՆ ԲԵՄԱԴՐՎՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցը Բյուրականի ՀանդԱրտ այգի թատրոնի հիմնադիր, ռեժիսոր, դերասան **Տիգրան Գյուլումյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանը նախորդ տարի երբ եկավ ՀանդԱրտ՝ «Ցանկապատ» ներկայացումը դիտելու, բավականին մեծ աղմուկ բարձրացավ այն բանից հետո, երբ նա լեզվակռվի մեջ մտավ դերասանների հետ, սկսեց բացատրել, որ սխալ է բեմադրված Ստեփան Զորյանի այդ գործը, ու նկարագրում էր, թե ինչպես պետք է բեմադրվեր: Դրանից հետո ներկայացումն ինչ ճակատագրի արժանացավ: Բեմադրվո՞ւմ է մինչ օրս:

- Այո, այն մինչ օրս բեմադրվում է: Ինչպես որ չորս տարի առաջ բեմադրվեց ներկայացումը, այնպես էլ մինչ այս պահը նույն ինտենսիվությամբ շարունակվում է: Մեզ մոտ՝ ՀանդԱրտ-ում, բացառապես հայկական գործեր են բեմադրվում: Վիլյամ Սարոյանի «Խաղողի այգին», Հովհաննես Թումանյանի պատմվածքները ու էլի տարբեր դասականների ստեղծագործություններ: Մեր ուղղվածությունն այդպիսինն է: Մեզ մոտ չի կարող ոչ հայկական ստեղծագործություն բեմադրվել: Հայ ժամանակակիցների գործերը եւս մեր թատրոնում բեմադրվում են: ՀանդԱրտ-ում բոլոր ներկայացումները պետք է լինեն հայի, հայի հոգեվիճակի, ապրումների, սիրո, կորուստների, վախերի ու ձեռքբերումների մասին:

- Ինչո՞ւ որոշեցիք, որ պարտադիր միայն հայկական գործեր պետք է բեմադրվեն:

- Մենք ապրում ենք Հայաստանում, իսկ թատրոնը հանդիսատեսի հետ երկխոսություն է: Իմ կարծիքով՝ թատրոնը պետք է իր երկրի քաղաքացիներին հարցադրումներ անի: Մենք՝ հայերս, ունենք մեր խնդիրները, մեր տխրության պահերը: Մեր թատրոնի ձեւաչափը՝ սարեր, գյուղ, դժվար թե գերմանական կամ ամերիկյան պիեսներ ենթադրի:

- Պետական թատրոնների դերասանները, ռեժիսորները մշտապես դժգոհում են, որ մարդիկ թատրոն չեն գնում, հետաքրքրված չեն արվեստով, սակայն որոշ մասնավոր թատրոններ, այդ թվում՝ Ձեր թատրոնը, կոտրում է այդ կարծրատիպը, քանի որ տոմսերը բավականին արագ են վաճառվում: Կարելի է ենթադրել, որ ուղղակի պետական թատրոններն ինչ-որ բան ճիշտ չեն անում եւ հանդիսատեսին վանում են: Օրինակ՝ մարդիկ 2 հազար դրամով Սունդուկյան թատրոնի տոմս չեն գնում, սակայն 7 հազար դրամ են վճարում եւ գնում են ինչ-որ մասնավոր թատրոն: Սա չի՞ նշանակում, որ մարդիկ իրապես սիրում են թատրոն, պարզապես՝ հոգեհարազատ թատրոններ:

- Փառք Աստծո, մեզ մոտ ամեն ինչ շատ լավ է: Մեր թատրոնն իր ձեւաչափով տարբերվում է: Երեւանից 35 կմ հեռավորության վրա է՝ սարերի գրկում: 2025 թվականին 55 հազար հանդիսատես ենք ունեցել: Ըստ վիճակագրության՝ հանդիսատեսի թվով առաջատարն է եղել:

- Ինչո՞վ եք գրավել հանդիսատեսին:

- Կա մի քանի գործոն: Առաջին հերթին մեր հաջողությունը կապված է դրամատուրգիայի հետ: Ամենակարեւոր բանն այն է, թե ներկայացումը որքանով է ակտուալ եւ որքանով է հետաքրքրում ժամանակակից մարդուն: Մեզ մոտ չկան պայմանականություններ, ամեն բան ռեալ է: Եթե պետք է՝ մեզ մոտ հաճախում են ձիերով, եթե պետք է՝ հաճախում են ավտոմեքենաներով: Մեր թատրոնը թատրոնի եւ կինոյի միքս է: Օրինակ, Թումանյանի «Լոռեցի Սաքոն» բեմադրում ենք գիշերային ժամերին, որպեսզի բնական մթություն լինի, իսկ Սաքոյի գիշերային տեսիլքներն ու վախերը ճիշտ արտացոլվեն:

- Վերջերս հումորիստներ Անդոն եւ Ռաֆոն սուր քննադատության արժանացան, քանի որ հայտնվել էին իշխանական քարոզարշավում: Ինչպե՞ս եք վերաբերվում, երբ դերասանները փորձում են իշխանություններին բացահայտ աջակցություն ցուցաբերել:

- Ես իմ սուբյեկտիվ կարծիքը կարող եմ ասել: Ես քաղաքականությամբ հետաքրքրված չեմ, եւ քաղաքական հարցերն ինձ չեն հուզում: Բայց, որպես քաղաքացի, ինձ հուզում է, թե որտեղ եմ ապրում ու ինչ պայմաններում: Դրանք առանձին իմ մտորումներն են, սակայն ես անձամբ քաղաքականության մեջ անելիք չունեմ: Եթե ես չեմ կարող ինչ-որ բան փոխել, դա նշանակում է, որ ես այդտեղ խառնվելու առիթ չունեմ: Իսկ թե ինչու են իմ ընկերները երբեմն խառնվում քաղաքականությանը, դա էլ իրենց խնդիրն է: Ես ոչ մեկին չեմ մեղադրում, ոչ էլ արդարացնում եմ:

- Դուք նշեցիք, որ Ձեր ղեկավարած թատրոնն առանձնակի կարեւորություն է տալիս հայկականությանը, սակայն այժմ հենց հայկականությունն է վտանգի տակ: Փաշինյանն ասում է, որ Ղարաբաղը երբեք չի եղել հայկական տարածք, որ Ղարաբաղյան շարժումը սխալ է եղել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումն իր համար առաջնահերթություն չէ, խոստանում է, որ վերընտրվելուն պես Հայ առաքելական եկեղեցու դեմ նոր պայքար է սկսելու: Արդյո՞ք այս հարցերի մասին մտածելը նշանակում է քաղաքականությամբ զբաղվել: Մի՞թե այս հարցերը Ձեզ չեն մտահոգում:

- Որպես ստեղծագործող, մեր ստեղծագործական թիմով բոլոր մեզ հուզող հարցադրումները ստեղծագործությունների միջոցով բարձրաձայնում ենք:

- Իսկ Դուք Ղարաբաղը հայկական համարո՞ւմ եք:

- Այո, համարում եմ միանշանակ, բայց աշխարհաքաղաքական այս իրավիճակում թե ինչու այն որպես առանձին պետական միավոր չընկալվեց, դա բոլորիս համար պարզ է: Չեմ ուզում խորանալ եւ մտնել այդ նրբությունների մեջ:

- Իսկ Ղարաբաղյան շարժումը ճի՞շտ էր, թե՞ սխալ:

- Այս հարցադրումները քաղաքական են: Շատ բաներ սխալ էին, շատ բաներ ճիշտ էին, բայց մեր ժողովուրդը շատ զգայուն է նման հարցերում, հեշտ հավատացող ժողովուրդ է, եւ որոշ մարդիկ, օգտվելով դրանից, փորձեցին պատրանքներ ստեղծել: Իսկ իրականում այդ շարժումները թե որտեղ տարան մեզ՝ իրավական առումով, դրանք էլ արդեն կնճռոտ հարցեր են:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ինչ է առաջարկում Մակրոնը՝ Հորմուզի վերաբերյալ

Ֆրանսիան մտադիր է առաջարկել ՄԱԿ-ին՝ հանդես գալ Հորմուզի նեղուցում ազատ նավագնացության ապահովման համար անհրաժեշտ պայմանների հետ կապված բանակցություններ վարելու նախաձեռնությամբ՝ հայտարարել է նախագահ Էմանուել Մակրոնը: Ի՞նչ է դա նշանակում: Եթե հետեւենք Մակրոնի հայտարարությանը, ապա Ֆրանսիան փորձելու է հասնել նրան, որ Հորմուզի նեղուցի բլոկադան անվերապահ եւ անխոչընդոտ կերպով վերացվի, ինչպես նաեւ՝ Իրանի հետ մեկնարկի սպասված երկխոսության անցկացումը: Մակրոնի նախագծի համաձայն՝ դա լինելու է բացարձակապես չեզոք եւ խաղաղ բանակցային հարթակ, որի նպատակն է լինելու՝ կարգավորել իրանական ճգնաժամը: Այդ ամենի համար Մակրոնը նախատեսում է նաեւ հատուկ առաքելության հաստատում եւ հավաստիացնում, որ Փարիզը Լոնդոնի հետ միասին կարողացել է ներգրավել 50 երկիր: Ֆրանսիայի նախագահը միջազգային համայնքի համար բացարձակ առաջնահերթություն է համարել Հորմուզի նեղուցի վերաբացումը եւ ընդգծել է՝ Ֆրանսիան կողմ է, որ նախ բացվի նեղուցը, մինչ մյուս հակասությունները կկարգավորվեն: Նեղուցի վերաբացումից հետո արդեն կարելի է սկսել բանակցությունները միջուկային կամ հրթիռային ծրագրերի շուրջ՝ ԱՄՆ-ի եւ Իսլամական Հանրապետության միջեւ՝ եվրոպական եռյակի՝ Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Միացյալ Թագավորության մասնակցությամբ: Հասկանալի է, որ ինչ-որ ձեւով, եթե ամեն բան լավ ընթանա, ապա կարող է կնքվել միջուկային գործարքի նոր համաձայնագիր: Սակայն այստեղ հարց է, թե ինչ են անելու Ռուսաստանն ու Չինաստանը, եւ արդյո՞ք Մակրոնի ասած 50 երկրների մեջ Չինաստանն ու հատկապես՝ Ռուսաստանը մտնում են, եթե հաշվի առնենք Ռուսաստան-Եվրոպա հարաբերությունների ներկայիս լարված վիճակը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՎԱԿՑՈՒՄ ԵՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄՆԱԿԻՑԸ ՄՆԱԼ

Նիկոլ Փաշինյանն իր ամպլուայից դուրս չի գալիս, կամ, ինչպես ասում են, լավագույն ավանդույթները շարունակվում են: Հիմա էլ քաղաքական հակառակորդներին՝ Ռոբերտ Քոչարյանին ու Գագիկ Ծառուկյանին է իրավական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքներով վախեցնում: Շատերը դա միանգամից որակեցին որպես իրավապահ համակարգին ուղղված հրահանգավորում: Քարոզարշավն ակտիվ ընթանում է, ու միեւնույն ժամանակ Բաքվից հայ գերիներն են օգնության կանչ հնչեցնում՝ Ռուբեն Վարդանյանը, Դավիթ Բաբայանը:

ՀՀ առաջին ՄԻՊ, իրավապաշտպան **Լարիսա Ալավերդյանը**, անդրադառնալով այդ հայտարարություններին, մեզ հետ զրույցում ասաց, որ դա ցածր մակարդակի, գռեհիկ եւ, ընդհանրապես, ոչ պատշաճ կեցվածք է ոչ միայն վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի պարագայում, այլեւ՝ կիրթ եւ դաստիարակված ցանկացած մարդու: «Ես ուշադրություն եմ դարձնում, որ հիմա ավելի, քան երբեւիցե, չկա որեւէ սահման ոչ թե քաղաքական մշակույթի, այլ, ընդհանրապես, մարդկային հարաբերությունների մշակույթից ամբողջովին դուրս եւ շատ ցածր մակարդակ է: Գիտեք, դա միայն անձին չի վերաբերում, զբաղեցնելով այդ բարձր պաշտոնը՝ նա օրինակ է ծառայում երիտասարդներին եւ դրա համար ամենամեծ հարվածը հասարակությանը հասցնում է նա՝ ոչ միայն իր քաղաքականությամբ, այլեւ՝ իր կեցվածքով»,- ասաց Ալավերդյանը:

Հայ գերիների՝ Արցախի նախկին ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի եւ Ռուբեն Վարդանյանի ուղերձների, ՄԻՊ Անահիտ Մանասյանին դիմելու վերաբերյալ հարցերին, նաեւ՝ արդյոք դա նշանակո՞ւմ է, որ այս իշխանությունները բացարձակապես չեն զբաղվում հայ գերիների հարցերով, ՀՀ առաջին ՄԻՊ-ն ասաց, որ այնքան լավ կլիներ, որ այս իշխանությունները բացարձակ չզբաղվեին գերիների հարցով: «Ներկա իշխանություններն ամենամեծ խոչընդոտն են Բաքվում անօրինական ձեւով պահվող այդ մարդկանց վերադարձի համար: Եթե որեւէ մի բան չի անում պետությունը, դեռ կարելի է դիմել այլ պետությունների, բայց արդեն բոլորը գիտեն, որ այս իշխանություններն ակնհայտորեն ոչ միայն ոչ մի բան չեն անում, որ այդ մարդիկ կարողանան դուրս գալ այդ վիճակից, այլեւ հակառակը՝ նրանք շահագրգռված են եղել ի սկզբանե: Ես միշտ ասել եմ՝ ես մեծ կասկած ունեմ, որ այդ մարդկանց այդտեղ հայտնվելու պարագաների եւ պատճառների մեջ կա եւ մասնակցությունը ներկա թիմի անդամների»,- ասաց Ալավերդյանը:

Իրավապաշտպանը շեշտեց, որ խնդիրը շատ ավելի վատ է ու խայտառակություն է, եւ ինքն իր ցավակցությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր մինչեւ հիմա ինչ-որ պատճառ են գտնում այս իշխանությունների կողմնակիցը մնալու: «Դա ապշելու բան է, դա անբարոյականության ամենահստակ դրսեւորումն է»,- եզրափակեց Լարիսա Ալավերդյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՄԵՐ ԱՉՔՆ Է ԽՈԹՈՒՄ ՉԵՂԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՎ

ՎԻՃԱԿ

Ընտրական ցանկացած հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը, ինչպես մեր նախնիները կասեին՝ «փրփուր ի բերան», փորձում է հասարակության աչքը խոթել իր (չ)բերած խաղաղությունը, միաժամանակ՝ տարբեր արտահայտություններով նոր պատերազմի հիմնավոր հիմքեր ստեղծել Ալիեւի համար: Եվ ընդդիմադիր գործիչները պարտավոր են հանրությանը պարզ ու հստակ բացատրել այն բազմաթիվ հակասությունները, որոնք առկա են վարչապետի վարած քաղաքականության ու խոսքի մեջ: Ուզում եմ անդրադառնալ երկու կարեւոր հարցի, որոնք լուրջ վտանգ են պարունակում:

Փաշինյանի քարոզարշավի գլխավոր մեխն այն է, որ նա մեզ համոզում է, թե բերել է խաղաղություն, իսկ ընդդիմությունը «պատերազմի կուսակցություն» է: Նրա փաստարկն է՝ մեկուկես տարի սահմանին զոհեր, կրակոցներ չկան, խաղաղություն է: Սակայն խաղաղությունը միայն կրակոցի բացակայությունը չէ: Խաղաղությունը նաեւ անվտանգությունն է, իրավական հստակությունը, պետական արժանապատվությունը, հակամարտության իրական կարգավորումը: Ոչ միայն այս ամենը չկա, անգամ խաղաղության մասին որեւէ ձեւական փաստաթուղթ չի ստորագրվել՝ նախաստորագրված վաշինգտոնյան թուղթը չստորագրվածի հաշիվ է: Մեր ինքնիշխան տարածքներում ադրբեջանական ուժեր կան, Բաքվում շարունակում են պահվել հայ գերիներ: Ադրբեջանը շարունակում է բարձրացնել «Արեւմտյան Ադրբեջանի» թեման, նոր պահանջներ ներկայացնում: Այս պայմաններում խաղաղության մասին խոսելը ոչ թե անիմաստ է, այլ՝ «բռի» քարոզչություն: Վտանգավորն այն է, որ նա փորձում է հավասարության նշան դնել արցախահայության վերադարձի իրավունքի եւ Ադրբեջանի առաջ քաշած «Արեւմտյան Ադրբեջանի» հորինված թեզի միջեւ, որը որեւէ հիմք չունի եւ նախկինում երբեք գոյություն չի ունեցել: Իսկ Փաշինյանի խոսույթը լեգիտիմացնում է այդ վտանգավոր գաղափարը: Ալիեւը պարզապես օգտվում է իրեն տրված հնարավորությունից եւ նոր պահանջներ, կեղծ գաղափարներ առաջ տանում՝ Նիկոլ Փաշինյանի թողտվությամբ: Շեշտենք, որ դա շրջանառության մեջ մտավ հենց Նիկոլի իշխանության տարիներին, երբ նա Արցախը ճանաչեց Ադրբեջանի կազմում եւ սկսեց հայկական պատմության դեմ մերժելի տեքստեր բարձրաձայնել, Արարատից ու ցեղասպանության ճանաչումից հրաժարվել:

Արցախցիների վերադարձի իրավունքը ճանաչված է միջազգային իրավունքով: Դա քաղաքական սակարկության թեմա չէ: Մեր ժողովուրդն իրավունք ունի հարցնել Փաշինյանին. ո՞վ է քեզ իրավունք տվել՝ ոտնահարելու այդ սրբազան իրավունքը, դու հարցրե՞լ ես արցախցիներին, հարցրե՞լ ես հայ ժողովրդին: Ինչո՞ւ ես փորձում արցախահայության իրավունքը նույն հարթության վրա դնել ադրբեջանցիների կեղծ «իրավունքների» հետ: Դրանով ոչ թե հավասարեցնում ես կորուստները, այլ ցեխի հետ ես խառնում արցախցիների ողբերգությունն ու ցավը: Պատմության մեջ չի եղել «Արեւմտյան Ադրբեջան» վարչաքաղաքական միավոր, մարզ, ինքնավարություն: Մինչդեռ Ադրբեջանում գոյություն ուներ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետություն՝ որպես առանձին քաղաքական սուբյեկտ: Արցախի հարցն ու «Արեւմտյան Ադրբեջանի» արհեստածին թեզը նույնացնելը ոչ միայն պատմական կեղծիք է, այլեւ՝ վտանգավոր քաղաքական մանիպուլյացիա, դավաճանություն սեփական ազգի շահերին: Եվ սա տեղի ունեցավ քո անհեռատես, գուցե՝ գիտակցված քաղաքականության արդյունքում: Եվ քո այժմյան խոսույթը ոչ թե խաղաղարար է, այլ՝ ադրբեջանահաճո, ավելի ճիշտ՝ ստրկահաճո: Որովհետեւ ստրկությունը սկսվում է այն պահին, երբ մարդը վախից սկսում է կեղծել իրականությունը, եւ այդ թեզերը կամ տգիտության արդյունք են, կամ՝ քաղաքական շահագրգռության: Ալիեւը որքան ջանք պիտի գործադրեր, որքան գումար ծախսեր, որպեսզի որեւէ մեկն իրենց համար նման քարոզչական նվեր ստեղծեր:

Հայաստանում դեռ մի մեծ խումբ մարդիկ կան, որոնք ապրել են 90-ական թվերին եւ տեսել են, թե ինչպես են ադրբեջանցիները հեռացել Հայաստանից՝ առանց բռնությունների, շատերը փոխանակելով կամ վաճառելով իրենց տները, նրանց նույնիսկ ուղեկցել են ոստիկանության ուժերը, ապահովել խաղաղ մեկնում: Մինչդեռ Ադրբեջանից հայերը փախել են Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերից հետո՝ թողնելով ահռելի ունեցվածք եւ կարողություններ: Այս երկու իրողությունների միջեւ հավասարության նշան դնելը բարոյական եւ պատմական խեղաթյուրում է: Եթե երբեւէ քննարկվի փախստականների վերադարձի հարցը, ապա պետք է խոսվի Ադրբեջանից բռնի տեղահանված 500 հազար հայերի վերադարձի մասին: Դու միակողմանիորեն հրաժարվում ես հայկական իրավունքներից, մինչդեռ Ալիեւը չունեցած իրավունքներն է ճոճում եւ ամեն օր ավելացնում նորերը՝ «անկլավներ», «Արեւմտյան Ադրբեջան», «վերադարձ», նոր տարածքային պահանջների ակնարկներ, Սահմանադրության փոփոխություն: Եվ վտանգավորն այն է, որ ոչ մի երաշխիք չկա, որ վաղը նույն ճնշման տակ Փաշինյանը, եթե վերընտրվի, այդ բոլոր զիջումներին չի գնալու: Եթե հրաժարվեց Արցախից, վաղը նույն մեխանիզմով կարող է հրաժարվել Սյունիքից ու Հայաստանի այլ հատվածներից: Ո՞վ կարող է վստահ ասել, որ վաղը չի խոսելու Երիվանի, Գյոլչայի կամ Ուչմիածնի ոչ հայկական լինելու մասին: Այս անձի իշխանավարման տարիներին հայերը դարձան պատմության մեջ առաջին ժողովուրդը, որի իշխանությունն անտարբեր հետեւեց, թե ինչպես են իրենց հայրենակիցներին բռնի տեղահանում հայրենիքից: Առաջին ժողովուրդը, որտեղ պետական քարոզչությամբ ատելություն էին սերմանում փախստական հայրենակիցների նկատմամբ: Սա մեր պատմության ամենացածր բարոյական անկումներից էր: Արցախը հայաթափվեց ոչ միայն պատերազմի, այլ նաեւ քաղաքական կապիտուլյացիայի հետեւանքով, եւ դրա հեղինակը մեկ մարդ է: Եվ այդ մեկ մարդը դու ես, Նիկոլ:

Մի քանի բառ էլ ասեմ իրական օլիգարխների մասին. ՔՊ-ն Սամվել Կարապետյանին անվանում է օլիգարխ: Մինչդեռ օլիգարխը պարզապես հարուստ մարդը չէ, այլ այն անձն է, որն ունի եւ ֆինանսական ռեսուրսներ, եւ քաղաքական որոշումների վրա ազդեցություն: Այսինքն՝ փողը վերածվում է իշխանության, իսկ իշխանությունը ապահովում է մեծ փողեր: Օլիգարխիան այն է, երբ պետությունը սկսում է ծառայել ոչ թե հանրությանը, այլ՝ սահմանափակ խմբի շահերին: Լսենք Արիստոտելին. «Օլիգարխիան համակարգ է, որտեղ իշխում են ոչ թե լավագույնները, այլ՝ հարուստները»: Եթե Սամվել Կարապետյանը պետական պաշտոն չի զբաղեցնում եւ պետական կառավարման վրա անմիջական լծակներ չունի, ապա ովքե՞ր են իրականում օլիգարխները: Թող ՔՊ-ականներն իրենց շուրջը նայեն:

Իսկ իրական վտանգը ոչ թե պարզապես հարուստ մարդիկ են, այլ իշխանությունն ու տնտեսական ազդեցությունը մեկտեղած համակարգը: Երբ իշխանությունը սկսում է ապրել կեղծիքով, վախ է տարածում, փուչ քարոզչություն է անում, եւ պետությունն աստիճանաբար կորցնում է իր դիմադրողականությունը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԵՍ ԿԼԱՎԴԻՈՍՆ ԵՄ». ՊԱՏՄԱԿԱՆ ՍԵՐԻԱԼ, ՈՐԸ ԿՏԱՆԻ ՁԵԶ ՀԻՆ ՀՌՈՄ

Անտիկ աշխարհը եւ Հին Հռոմը համաշխարհային կինոյում մշտապես սիրված թեմա են եղել, չնայած, որպես պատմական կինոյի ժանր, շատ բարդ են ու բազմաշերտ: Այս շարքի մեջ կխոսենք «Ես Կլավդիոսն եմ» սերիալի մասին, որն էկրան է բարձրացել 1976 թվականին եւ նկարահանվել է BBC-ի կողմից: Սերիալը պատկանում է պատմական դրամայի ժանրին: Այն բրիտանացի գրող Ռոբերտ Գրեյվսի Կլավդիոս կայսեր մասին երկհատոր պատմավեպի էկրանավորումն է:

Նախագիծն ունեցել է համեմատաբար համեստ բյուջե: Էկրանավորումը երբեմն հասնում է թատերական բեմականացման: Սակայն, չնայած այս ամենին, այն համարվում է ինտելեկտուալ պատմական հեռուստանախագծերի շարքում ամենահաջողվածներից մեկը, որը միավորում է անտիկ պատմությունը, հոգեբանական դրաման եւ քաղաքական փիլիսոփայությունը: Սյուժեի հիմքում Հռոմեական կայսրության վաղ շրջանի պատմական իրադարձություններն են, նախեւառաջ՝ Հուլիոս-կլավդիոսյան արքայատան ժամանակները՝ սկսած Օգոստոս կայսրից մինչեւ Կլավդիոս: Կենտրոնական դերում Կլավդիոսն է՝ պատմական անձ, որը, պատմիչների վկայությամբ, թեեւ ֆիզիկապես թույլ է եղել, կակազող, սակայն պատմաբանները կարծում են, որ նա հանիրավի թերագնահատված գործիչ է, իրականում կարողացել է դիմակայել ու հաղթահարել բազմաթիվ պալատական ինտրիգներ ու դառնալ կայսր: Սցենարի ստեղծման համար կարեւոր նշանակություն են ունեցել Դիոս Կասիոսի, Սվետոնիոսի եւ Տակտիոսի պատմական երկերը, որոնց հաղորդած տեղեկություններով լրացվել է վիպական տեքստը: Սակայն սերիալն անտիկ պատմության բառացի վերակերտումը չէ: Այն պատմական վավերագրականության գեղարվեստական մեկնաբանությունն է, որտեղ առկա են նաեւ իշխանության, բռնակալության, քաղաքական մանիպուլյացիաների եւ հոգեբանական տրավմաների մասին ժամանակակից պատկերացումները: Հատուկ կերպար է Լիվիան՝ Օգոստոսի կինը, որը պատկերված է որպես կայսրական քաղաքականության գրեթե մաքիավելիական կերպարի տեսքով: Պատմաբանների համար ցայսօր վիճարկվում է այն, թե Լիվիայի կինոկերպարը որքանով է համապատասխանում նրա իրական պատմական կերպարին: Մասնագետները նկատում են, որ անտիկ հռոմեական սենատորական ավանդությունը հնարավոր է, որ միտումնավոր է դեմոնիզացրել Լիվիայի կերպարը, սակայն սերիալում նա ներկայանում է որպես Հռոմում իշխանության ստվերային կենտրոն:

Ռեժիսորը Հերբերտ Վայսն է, սցենարիստը՝ Ջեք Փուլմանը: Սերիալում հանդես են եկել Դերեք Ջեքոբին, Բրայան Բլեսեդը, Սիան Ֆիլիպսը, Ջոն Հյորթը: Սա սերիալ է, որտեղ ոսկերչության մակարդակում ուսումնասիրվում է իշխանությունը՝ որպես ֆենոմեն, դրա գործադրման մեխանիզմները, քաղաքական գոյապայքարն ու հիշողությունը: Այն կարող է հետաքրքրել բոլորին, ովքեր անտարբեր չեն պատմական, դրամատիկ եւ հոգեբանական ու փիլիսոփայական թեմաների կինոմեկնաբանությունների նկատմամբ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեկ մարդանման արարածը

Փաշինյանի քարոզարշավի ժամանակ նրան «դավաճան» անվանելու համար բլոգեր Արտակ Ավետիսյանը կալանավորվել է 1 ամսով: Այսինքն՝ նա կալանավայրից դուրս կգա, երբ



պաշտոնապես հայտնի կդառնան ԱԺ ընտրության արդյունքները: Որքան հիշում եմ, սա առաջին դեպքը չէ, երբ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձին «մեծարգոյի» փոխարեն մեկ այլ անվանում տալու դեպքում մարդը հայտնվում է քննչական կառույցի ուշադրության կենտրոնում: Իսկ գործընթացն էլ ավարտվում է «անկախ» դատական համակարգի որոշմամբ կալանավայրում հայտնվելով: Բլոգեր Արտակի դեպքում՝ ընդամենը մեկ ամսով, այլոց դեպքում՝ բազում ամիսներով:

Դա նիկոլական «ժողբաստիոնի» բնական հատկանիշն է թե՛ ընդհանրապես եւ թե՛ հատկապես նախընտրական ժամանակահատվածում: Քանի որ ողջ իրավապահ համակարգը ծառայում է ոչ թե օրինականությանն ու արդարադատությանը, այլ ընդամենը մեկ մարդուն: Եվ այդ մեկ մարդը ո՛չ ես եմ, ո՛չ՝ դու, հարգելի ընթերցող, եւ ո՛չ էլ 3 միլիոն «վարչապետներից» ցանկացած մեկը, այլ՝ միայն ու միայն երբեմնի «դուխով» Նիկոլը, որն այնուհետ, իր «սիրելի» ժողովրդի ասելով, վերածվեց «խեղճ հարիֆի»: Ինչպես նաեւ՝ ընդամենը մարդանման արարածի, երբ հաշվի ենք առնում թշնամու կողմից իրեն ուղղված ստորացումներն անմռունչ տանելը եւ մարդկային ու ազգային արժանապատվությունը կորցնելը: Ու մարդանման այդ մեկ արարածը ցանկանում է մինչեւ կյանքի վերջը կառչած մնալ վարչապետի աթոռից:

Այդ մեկ արարածը, սակայն, չի բավարարվում իր իշխանությունը երկարաձգելու նպատակով օրենսդրություն խստացնելով, որ վերաբերում է միայն հակառակորդներին: Չի բավարարվում ուժայիններով իրեն շրջապատելով ու իր «խիստ թանկարժեք» անվտանգությունն ապահովելով: Ու արդյունքում՝ իրեն ոչ ձեռնտու անձանց ազատությունից զրկելու հետ մեկտեղ փորձում է լեգիտիմություն հաղորդել իր անձնական իշխանությանը: Խոսում է արժեքներից, մշակում է վարքի էթիկական նորմեր, ճառում է հոգեւոր թեմաներից: Բայց միաժամանակ ոտնահարում է արժեքները, խախտում է բարոյական կանոնները՝ օրինակ ծառայելով իր ենթականերին ու իրեն ծառայողներին: Հոգեւոր աշխարհից կիլոմետրերով հեռու գտնվելով՝ փորձում է, իր ասելով, կարգավորել այդ բնագավառը: Իսկ «բարեկարգումն» էլ փորձում է կատարել Եկեղեցու՝ ամենից ավելի բացասականորեն աչքի ընկած գործիչների միջոցով:

Բայց քանի որ հայոց եկեղեցու «բարեկարգման» հարցում ինքը խայտառակ պարտություն կրեց, հիմա էլ փորձում է անգրագետ զանգվածի ուղեղը մտցնել, թե իր օրոք Հայաստանը վերածվում է հոգեւոր պետության: Պատկերացնո՞ւմ եք, հայոց եկեղեցին պառակտած, առանձին եկեղեցիներ համարյա թե ասպատակած, բանակում գնդերեցների ինստիտուտը վերացրած իշխանության օրոք մեր երկիրը, իր ասելով, դառնում է հոգեւոր պետություն: Եվ ողջ զավեշտն այն է, որ դա փորձում է հիմնավորել՝ սոցիալական այս կամ այն հարցի կիսատ-պռատ լուծումը մեջբերելով: Արդեն չգիտես՝ չի՞ իմանում, որ բժշկական ծառայությունների հասանելի լինելը, օրինակ, վկայում է ոչ թե հոգեւոր, այլ սոցիալական պետության մասին, որ դրա պահանջն ամրագրված է նախկինների կողմից ընդունված Սահմանադրության 1-ին հոդվածում: Ուրիշ հարց, որ այդ հոդվածը եւս կարող է փոփոխության ենթարկվել՝ «սոցիալական պետություն» եզրույթը փոխարինելով «հոգեւոր պետությամբ», որպեսզի հաստատվի իր ասածը:

Ողջ իր գիտակից կյանքում մարդկանց հիմարի տեղ դնելով, ինչը հենց հանուն որոշակի խմբի կամ իր դեպքում՝ միայն անձի, նեղ շահերի մարդկանց օգտագործելու տիպիկ դրսեւորում է, խոսում է այդ երեւույթի անթույլատրելիության մասին: Ինչ վերաբերում է քաղաքացիներին սիրող պետությանը, ապա զոհված զինվորների մայրերին ասֆալտի վրա քարշ տալը վկայում է ճիշտ հակառակի մասին: Ինչեւէ, որպեսզի վերջապես վերացնենք այդ ամենն ու փակենք մեր իրական ու հոգեւոր հայրենիքի ամոթալի էջը, պետք է հունիսի 7-ին, նախ, մեկ մարդու նման այցելենք մեր ընտրատեղամասը: Եվ երկրորդ՝ ձայն տանք իրական ընդդիմադիր քաղաքական ուժերից մեկին՝ «ոչ» ասելով իր ողջ գիտակից կյանքում մարդկանց մանիպուլացնող՝ այսօր վարչապետի աթոռից կառչած այդ անձին:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Հայտարարություն

Կորել է Լուսինե Արսենի Սարգսյանի դիպլոմը: Այն տրվել է 2011 թվականին՝ Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի կողմից (Բաժին՝ Քույրական գործ): Դիպլոմի համարը՝ AK 096569, գրանցման համարը՝ 6451, տրվել է 07.07.2011 թվականին:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 16.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Խաղից դուրս վիճակ

Բոլորին հայտնի է ֆուտբոլային մրցումների ժամանակ կիրառվող «խաղից դուրս վիճակ»-ի օրենքը: Ըստ այդ օրենքի, հարձակվող ֆուտբոլիստն իր թիմակիցների կողմից իրեն փոխանցվող գնդակին հարվածելու պահին չպետք է ավելի առաջ անցած լինի մրցակցի վերջին խաղացողից: Հակառակ դեպքում, նշանակված գոլը չեղարկվում է: Այսպիսով կանխվում է հեռվից՝ մեկ հարվածով փոխանցված պատահական գնդակ ստանալով, առանց մեծ դժվարության գոլի հեղինակ դառնալը: Այլ խոսքով՝ չի թույլատրվում երկնքից ընկած պատառը հենց այնպես ճանկել ու կուլ տալ:

Երանի թե քաղաքական դաշտում եւս կիրառվեր այդպիսի մի օրենք: Հասարակական շարժումների ու հեղափոխությունների բացասական կողմերից մեկն էլ նման օրենքի բացակայությունն է. երբ ժողովրդական հուզումների արդյունքում դաշտում «խաղից դուրս վիճակում» հայտնված մեկը, քամու բերածը հափշտակելով, առանց մեծ դժվարության, հայտնվում է երկրի ղեկին եւ դառնում ամեն ինչի տեր: Ի դեպ, հենց այդպիսիներն ավելի շատ են ձգտում կառչած մնալ հեշտությամբ նվաճած այդ աթոռին, քան մյուսները, որոնք աստիճանական զարգացումով ու փորձառությամբ հասել են տվյալ պաշտոնին:

Նմանություններն անհերքելի են: Բոլորն էլ հաստատում են, որ ներկա իշխանություններն ընտրվել են խիստ փոքրամասնության քվեներով՝ մյուսների անտարբերության եւ մասամբ էլ զարմացած հայացքների դիմաց: Բոլորն էլ նկատում են, որ սրանք ամեն քայլի (օրինական կամ ոչ) դիմել եւ դեռեւս դիմելու են, որպեսզի պահեն իրենց գրաված դիրքերը:

Ճիշտ այդ պատճառով է, որ ժողովրդավարության մեջ փորձառու հասարակություններում իշխանափոխության գործընթացները զարգանում են սառը դատողության պայմաններում՝ բավարար ժամանակ հատկացնելով դրանց: Հակառակ դեպքում, «խելագարված ամբոխների» տրամաբանությամբ շարժվողներն ավելի ուշ են գլխի ընկնում եւ զղջում իրենց արածի ու չարածի համար: Այս հոգեվիճակում հայտնվեցին առաջին հերթին սրանց այն գիտակից աջակիցները, որոնք շատ արագ գլխի ընկան, որ դա չէր իրենց ուզածը, ու մեկը մյուսի հետեւից լքեցին իրենց ստանձնած պարտավորությունները: Օրինակները բազմաթիվ են:

Մնում է, որ մեր բանիմաց եւ երկրի ներկայի ու ապագայի նկատմամբ պատասխանատվություն կրող քաղաքացիներն այս անգամ դուրս գան կրավորական վիճակից եւ ակտիվորեն մասնակցեն առաջիկա ընտրություններին: Մերժելով հանդերձ նախկինների որոշ անօրինականությունները, պետք է արձանագրել, որ ո՛չ նախկինները եւ ո՛չ էլ սրանք են երկրի տերերը. երկրի տերը մենք ենք՝ Հայաստանի լիիրավ քաղաքացիներս, որ ամուր հավատքով ու բարձր գիտակցությամբ մերժելով՝ մերժում ենք սրանց ապիկարություններն ու հայ ժողովրդին ոչ վայել անմակարդակ արտահայտությունները: Նայելով սրանց քարոզչության որակին, հայտնի չէ, թե մեզ ինչի տեղ են դրել, երբ մանկամտորեն ահաբեկում են մեզ ենթադրյալ պատերազմով, առանց ակնարկելու պատերազմ հրահրողի մասին: Բացահայտ ճշմարտություն է, որ պատերազմը սկսում է թշնամին՝ հատկապես այն ժամանակ, երբ նկատում է հարեւան երկրի ղեկավարության տկարությունն ու անսկզբունք զիջողականությունը:

Պետք է յուրաքանչյուրս քաջ գիտակցենք, որ, անկախ մեր ընտրողների քաղաքական հայացքներից, ի սեր գալիք սերունդների, չթողնենք, որ մեր երկրի ղեկին բարձրանան «խաղից դուրս վիճակում» հայտնվող մարդիկ, որ իրենց անմակարդակ վարքուբարքով չմսխեն մեր ժողովրդի թե՛ անցյալի եւ թե՛ գալիք սերունդներին պատկանող մշակութային արժեքներն ու պատմական նվիրական ժառանգությունները:

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am